



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

















Մ Ա Տ Ե Ն Ա Չ Ա Ր Ա Ն

Մ Ա Ն Կ Ա Ն Յ



Ձ Մ Ե Ռ Ի Ա Ն

Ի Ր Ի Կ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՋՐԱԾՈՅ Բ. ԱՋԱՏԵԱՆ Ի ՔԼ



THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

ALBERT A. BENTLEY & CO.

Զ Մ Ե Ռ Ի Ա Ն

ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

ԿԱՄ

Ա. Յ Լ. Ե Ի Ա. Յ Լ. Բ Ա. Ր Ո Յ Ա. Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ա Տ Ո Ր Ա.

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ս Ո Ւ Ր Բ Ղ Ա Ջ Ա Ր

1858

17700

2 U 6 4 3 U 2

1875

1875

U 3 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

1875



1875

1875

1875



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Եւրոպայի գեղերէն մեկուն մէջ Մարկեղոս անունով բարեպաշտ մարդ մը կար, որ բաւական ունեւոր ըլլալով աւելի ընտրեր էր քաղքէ հեռու իր հանգստութեամբը ապրիլ, քան թէ քաղքի շփոթութիւններուն մէջ հարստութիւնն ու փառքը պատիւը աւելցնել:

Հինգ զաւակ ունէր աս Մարկեղոսը, և բոլոր սրտանց կը հոգար որ բարեպաշտ, մարդավար ու զիտուն տղաք ըլլան. անոր համար առաջինի ու իմաստուն քահանայ մը առաւ քովը որ իր տղոցը վարժաստութիւն ընէ:

Այն կօթը տարի աս դովելի քահանան հոն կենալէն ետքը, ան տեղի եպիսկոպոսը քովի մեծ գեղին աւագերէց ըրաւ զինքը. ուստի պէտք եղաւ որ ելլէ Մարկեղոսին անէն: Մարկեղոսին տղաքը շատ տըրտ



մեցան յաս բանիս վրայ, և հրամանս առին  
իրենց հօրմէն որ դոնէ ամմէն շարաթ եր-  
թան իրենց արդիւնաւոր վարժապետը  
տեսնան :

Ան ամառը ասանկ անցուցին • իսկ ձը-  
մեռը ինչ պիտի ընենք ըսելով երբոր տըրա-  
մուժեան մէջ էին տղաքը, Մարկեղոսը  
խօսք դրաւ քահանային հետ որ ան ձմեռը  
ամմէն հինգշաբթի իրիկուն իր ընտանիքով  
աւագերէցին տունը երթայ, ան ալ ի-  
րենց բարոյական ու հոգևոր բաներ պատ-  
մէ • որով անոնց սրտին մէջ ցանաճ առա-  
քինութեան հունատերը ծլին ծաղկին ու  
ստղաբեր ըլլան : Եւ իրաւցընէ քիչ ատե-  
նէն Մարկեղոսին տղաքը իրենց վարպե-  
տին տուած դասերը աղէկ սորվելով,  
փառք ու պարծանք եղան իրենց ճնողա-  
ցը, և անոնց յոյսը պարապ չհիշանեցին :

Մենք ալ հաւատարմութեամբ ժողկե-  
ցինք իրեն խօսքերը • և ահա կուտանք մեր  
տղոցը ձեռքը • Աստուած տայ որ իրենք  
ալ նոյնպէս օգուտ քաղեն ու բարեպաշ-  
տութեամբ և խնամտութեամբ դարդա-  
րուին :








671U





# Չ Մ Ե Ռ Ի Ս Ն

## ԻՐԻԿՈՒՆՆԵՐ



### ԱՌՋԻ ԻՐԻԿՈՒՆ

Աստուծոյ վախը , և մարդկային  
նկատմունքը .

Գերմանիոյ քաղաքներէն մէկուն մէջ բարեպաշտ դարբին մը կար , որ մէկ հատիկ դաւակ մը ունէր Նդիա անունով , ու խելքը միտքը ան էր որ աղէկ կրթէ աս իր դաւակը : Միշտ սուրբ դրբին աս գեղեցիկ խօսքը կ'ըսէր իրեն . « Աստուծոյ վախը խնայութեան բարկաբան է » . և կը հասկըցընէր՝ որ եթէ մէկը երջանիկ ըլլալ կ'ուզէ՝ Աստուծոյ պատուիրանները պիտի



սէր իրեն չեխելով . « Թէ որ մէկը  
հիմա առ ըրածդ տեսնելու ըլլայ  
նէ , ինչ պիտի ընես » : Աս էր ահա  
բոլոր իրեն աղուն տուած կրթու-  
թիւնը : Տղան առ խրատը պահեց .  
բայց ինչ օգուտ որ խրատին հիմը  
խախուտ էր , հիմը մարդկային  
նկատմունք էր , որ մարդս կեղծա-  
ւորութեան մէջ կը ձգէ , որով մարդ  
քիչ մը ատեն ուրիշները կը խաբէ ,  
բայց օր մը չէ նէ օր մը խաբէու-  
թիւնը դուրս կելլէ , խաղբ կ'ըլլայ :  
Ասանկ առ Նիկոլը խելացի ճար-  
պիկ տղայ մըն էր . բայց իր ընկեր-  
ներն ալ քիչ ատենէն հասկըցան  
իրեն կեղծաւորութիւնն ու խարդա-  
խութիւնը : Ասան դի երբեմն մէկ  
տեղ խաղալու ատեն՝ մէկուն մէկ  
բանը կը դողնար , մէկային մէկալ  
բանը . և անանկ աչքաբացութեամբ  
ու շուտութեամբ կ'ընէր առ բաներն  
որ մէկը չէր կրնար զինքը յանկարծ  
բռնել , թէպէտև ամէնքն ալ վրան  
կը կասկածէին . անոր համար սիր-  
տան կամաց կամաց իրմէ հեռու կե-  
նայ :



Նշիան ու Նիկոլը երկուքն ալ  
նոյն տարիքը ըլլալով, երբոր իրենց  
հօրերնուն արհեստը սորվեցան՝ ու  
դեցին մէկ ճամբորդութիւն մը ը-  
նել, դէպ 'ի Գաղղիա երթալ: Աս-  
ջինին դիզած հարստութիւնը՝ առա-  
քինութիւն ու բարեպաշտութիւն  
էր. ուստի ճամբայ ելլալէն առաջ  
ընդհանրական խոստովանանք մը  
եղաւ ու հաղորդուեցաւ, խնդրե-  
լով որ Աստուած իրեն բարի յաջո-  
ղութիւն տայ: Երբոր իր հօրը մնաս-  
բարովի դնաց նէ, հայրը աչուրնե-  
րը լեցուած՝ դարձաւ ըսաւ իրեն.  
« Ուրեմն դու դիւ քիչ մը ատենէն  
պիտի թողուս, որդեակ իմ. դու  
դիտես թէ ես քեզ ինչպէս կը սի-  
րեմ, և քու երթալուդ վրայ որչափ  
տրտմած եմ. բայց չեմ ուզեր դէմ  
կենալ. վասն զի կ'ուզեմ ալ քու  
ճամբորդութիւն ընելդ, որ խելք  
սորվիս ու մարդ ըլլաս. մինակ մէկ  
երկու բան ըսեմ քեզի որ անկը-  
ճիդ օղ ըլլայ. Ասխաղիւր Աստուծ-  
մէ, և իր կամայքը դէմ բան մը չը-



նես : Նայէ որ բարեպաշտութիւնն  
 ու խոհեմութիւնը ձեռքէ չիթողուա :  
 Արիշի բանին աչք չիտնկես : Տը-  
 ւած խօսքդ նայէ որ պահես : Աւ-  
 րիշի վրայ չար չիխօսիս , և քեզի  
 չարիք ընողին՝ նայէ որ բարիք ը-  
 նես : Հետու կեցիր ան ընկերու-  
 թիւններէն որ կրնան քու բարեպաշ-  
 տութեանդ կամ անմեղութեանդ  
 մասս մը բերել : Չըլլայ թէ՛ որ և ի-  
 ցէ մարդու հետ բարեկամանաս .  
 հապա նայէ որ դիմացինդ աղէկ  
 հասկընաս : Ստուծոյ երկխօզը վա-  
 հան մը ըլլայ քեզի որ անով ամ-  
 մէն փորձանքներէ խալըսիս : Չըլ-  
 լայ թէ մարդկային նկատման հա-  
 մար քու խղճմտանքիդ դէմ բան  
 ընես , վասն զի մարդկանց հաճոյ  
 ըլլալու մտքով միայն աշխատելու  
 որ ըլլաս՝ բանդ դէչ կերթայ : Նե-  
 դութեան մէջ ինկած ժամանակդ  
 սիրտդ հանդիստ բռնէ , և խղճմը-  
 տանքդ մաքուր . դիտցիր որ Ստ-  
 տուած երբեմն դմեզ փորձելու հա-  
 մար նեղութիւն կը խրկէ մեզի ,



բայց ոչ երբէք զմեզ ձեռքէն կը  
թողու » :

Նդիային մայրն ալ մէկ քանի  
հարկաւոր բաներ զուրցելէն ետքը,  
կրկին և կրկին ապրասպրեց իրեն որ  
սուրբ Աստուածածնայ Չերմեռանդ  
ըլլայ, ու զինքը իրեն բարեխօս բըռ-  
նէ. ուստի հանեց տուա իրեն յի-  
շելիքի պէս Աստուածածնայ պատ-  
կերք մը որ իր վրան պահէ :

Համբայ ելաւ Նդիան, ու հասաւ  
Պելճիա. քիչ ատենէն ետքն ալ  
Նիկոլը ելաւ ճամբայ, ու հասաւ  
Գաղղիայի հարաւային կողմերը :  
Երկուքն ալ հետերնին չափաւոր  
ստակ առեր էին, բայց իրենց կըր-  
թութիւնն ու վարքը մէկմէկէ շատ  
տարբեր էին : Նդիան ամենևին չէր  
պակսէր իր ազօթքէն, ու կիրակի՛  
տօն օրերը պատարագ տեսնելէն :  
Իր ճամբորդութեանը մէջ մինակ  
երթալու ատեն՝ միշտ ցած ձայնով  
կըսէր ան ազօթքները որ բերնուց  
զիտէր, և ճամբուն վրայ ուղղա-  
փառի ծամ մը տեսնելուն պէս ներս



կը մանէր՝ զինքը Աստուծոյ կը յանձնէր :

Իսկ Նիկոլը անոր ներհակ աս ամէն բանէն ետ կեցած էր . աղօթքի տեղ՝ կամ անաղարկեչտ երգեր կ'երգէր , կամ փուճուճուճ բաներու վրայ մէկուն մէկալին հետ խօսակցութիւն կ'ընէր : Աեց ամսուան մէջ քանի քանի վարպետներ փոխեց , և ամեննին տեղ մը հանդարտ չէր կրնար կենալ իր խեռ բնութեանը համար : Ինքզինքը խաղի ու խմելու տուաւ . քանի որ վարպետին աչքին առջևն էր՝ կ'աշխատէր . իսկ մինակ մնացած ատենը ամէն բան կը թողուր . աս սլառ ճառաւ մէկ գործք մը զլուխ չէր կրնար հանել : Եղիան իր ձեռքէն եկածին չափ միշտ կ'աշխատէր . ասով օրէ օր առաջ դնաց . իր արհեստին մէջ վարպետ եղաւ , ու ամէնքը իր վրայ բարի համարմունք ունեցան . իր աղէկութեանն ու բարեալաշտութեան անունը չորս զին տարածուեցաւ . և բոլոր վարպետ



ները կը ցաւէին՝ երբոր իրենց քովէն կ'ելլէր որ աւելի մեծ վարպետներու քով մտնայ: Սասնկով Եղիան իրեք տարուան մէջ Պելճիայէն ելաւ ինչուան Քոլոնիա դնաց, անկէց ալ ճամբայ ելաւ որ Պեռլին երթայ:

Օր մը տօպրակը կունակը դարկած, դաւադանը ձեռքը, շունը ետեւէն, անտառի մը մէջէն կ'անցնէր. կտոր մը կեցաւ որ յողնութիւնը առնէ: Իր շունը որ միշտ հետն էր, ասդիս անդին վազվրտտելու ատենը մէյմըն ալ յանկարծ սկսաւ կատաղաբար հաջել ու ոտուրներով դետինը փորել: Եղիան սկսաւ շունը իրեն կանչել, բայց անիկայ մտիկ չէր ըներ: Ոտք ելաւ դնաց շանը քով. տեսաւ որ դոհարներով դարդարած ոսկի ժամացոյց մը կեցեր է դետինը: Եղիան մէկէն առաւ սկսաւ զննել ու ըսել ինքնիրեն. « Սնտարակոյս ասիկայ ճամբորդի մը պիտի ըլլայ. առջի քաղաքը հասնելուս պէս տանիմ



գատաւորին տամ որ տիրոջը ձեռքը հասցընէ » : Աս մարդ սկսաւ քաղել դէպ ՚ի քաղաքը երթալ : Բայց շունը նորէն յանկարծ կանկ առաւ ու սկսաւ առջինէն աւելի հաջել : Աղիան մէկէն ետ դարձաւ . շունն ալ ան միջոցին վաղեց ցատկեց փոսի մը վրայէն անցաւ , ու թռփի մը վրայ ելաւ . կարծես թէ իր տէրն ալ իր ետեւէն կը կանչէր : Մէյմընալ ինչ կը նայիս , մէկ հագուած սգուած մարդ մը արխալուայ դետինը փռուած հողեվարքի մէջ կեցեր է : Յայտնի բան է որ խեղճ մարդը աւաղակներու ձեռքընկած է եղեր , որ դինքը հանուեցուցեր ու վիրաւորեր՝ անտատին մէջ տեղ մը ձգեր են որ մարդ չիմանայ : Աղիային երեսին դոյնը պատ կտրեցաւ , ու վախէն շունը սկսաւ բռնուիլ : Հիմայ ինչ ընէ խեղճ տղան , կենայ օղնէ՛ ան խեղճին , բայց ինչպէս կրնայ ընել . յանկարծ վրան մարդ հասնի նէ՛ կրնան բռնել դինքը , ըսելով թէ



դուն սպաններ ես : Մէկը չիկայ որ  
իրեն անանդութեանը վկայ ըլլայ .  
ետքը ինչ գէշ բան պիտի ըլլայ եր-  
բոր դիները բանա դնեն ու մարդա-  
սպանի պէս դատապարտեն : Աս  
բաները մտածելով սկսաւ դողալ .  
բայց մէկէն ուրիշ բան մը միտքը  
եկաւ . « Իմ հայրս ինձի կ'ըսէր ,  
թէ Աստուծակէ 'ի դատ' բանէ մը մի  
վախնար . մարդկանց դատաստա-  
նը Աստուծոյ դատաստանին առջև  
բան մը չէ . ուրեմն պէտք է որ օղ-  
նեմ աս խեղճ ողորմելի մարդուն .  
այ թէ ինձի ինչ կրնայ ըլլալ՝ ան  
փոյթս չէ . բաւական է որ ըրածս  
բարեգործութիւն մըն է » : Աս ըսաւ ,  
ու մէկէն տօպրակը կռնըկէն վար-  
տաւ , դնաց վիրաւորուած մար-  
դուն քովը , վերցուց դգեստը , տե-  
սաւ որ խեղճ մարդը մեծ վէրք մը  
առեր է վզին վրայ , և արիւնը ջրի  
պէս կը վազէ անկէց : Մէկէն վեր  
վերցուց մարդուն դուխը՝ ծառի մը  
կռթընցուց . ետքը առաւ դիտարկը ,  
վազեց դնաց ջուր բերելու որ վէր-



քը լուայ : Աս որ ըրաւ , խեղճ մար-  
դուն աչուրները մէյմը բացուե-  
ցան , տեսաւ իր ազատիչը , ըիչ  
մը խնտայ , կարծես թէ իրեն շնոր-  
հակալ ըլլալու մտքով , բայց ամե-  
նեին խօսք մը չիկրցաւ հանել բեր-  
նէն : Բացաւ Եղիան իրեն տօպրա-  
կը , հանեց մէջէն իր վզնոցն ու ա-  
նով կապեց վէրքը : Լուայ մար-  
դուն արիւնոտ երեսը , ու անդդալի  
կերպով մը բոլոր մարմինը դովա-  
ցուց : Բայց շունը նորէն սկսաւ հա-  
ջել . չորս հողի , որ ան միջոցին ան-  
տառին մէկալ կողմէն կ'անցնէին ,  
չանը ձայնը լսելով եկան հոն որ ի-  
մանան թէ ինչ կայ : Ասոնք մօտիկ  
քաղքէն ելեր՝ ուրիշ դեղ մը կ'եր-  
թային : Աս դարհուրելի տեսարա-  
նը տեսան չիտեսան՝ վազեցին կա-  
տաղութեամբ բարերար Եղիային  
վրայ . « Այ անդգամ աւաղակ , ը-  
սին , դուն սպաննեցիր ուրեմն մեր  
քաղաքացին հա՛ . դուար ահա քու  
ազատիժդ . սլ տա անգամ քեզի խա-  
լըսում չիկայ : Ա՛ դիտէ ուրիշ ան-



դամ ալ ս'ըջափի ասանկ անդդամու,  
թիւններ ըրած ես » : Մէկէն չորս  
դին առին , ձեռքը ոտքը կապեցին  
որ չխփախչի :

Եղիան ասոնց ըրած անդթու-  
թեանը վրայ ամենեկին չիխառովե-  
ցաւ . հանդարտ կերպով մը իրենց  
զուրցեց թէ « Ես աւաղակ չեմ , հա-  
պա ճամբէն անցնելու ատենս շա-  
նը հաջելուն համար կանկ առի նա-  
յեցայ թէ ինչ կայ . ահա ժամացոյց  
մըն ալ դտայ աս տեղուանքս . ուս-  
տի ես գող չեմ . թէ որ ես անգութ  
մարդ մը ըլլայի նէ՛ ճամբաս չէի  
թողոր ու չէի դար աս խեղճ ողոր-  
մելիին օգնելու , հապա կը թողուի  
որ մեռնի , ինչ կուզէ ըլլայ » :

— « Ատոնք խօսք են , ըսաւ ան  
չորսէն մէկը . ինքզինքդ արդարա-  
ցընել կուզես . բայց չես կրնար :  
Հիմակուհիմա բանդ աղէկ է . մենք  
դքեզ կը տանինք դատաւորին , հոն  
կ'իմացուի թէ քու սուտերդ ինչպէս  
դուրս պիտի ելլեն : Անկէ վերջը քու  
մարդասպան ըլլալուդ մէկ յայտնի



ապացոյցն ալ աս է որ ձեռուրներդ  
ու լաթերդ բոլոր արիւնտաներ են ,  
ուստի աս խօսքերով դքեղ չես կըր-  
նար արդարացընել » :

Նդիան տեսաւ որ իր խօսքը մը-  
տիկ ընող չիկայ , ձայնը վար քա-  
չեց , բայց ամենեկին չայլայլեցաւ ,  
վասն զի բոլոր յոյսը Աստուծոյ վը-  
րայ դրեր էր , գիտնալով որ Աս-  
տուած իր ծառաները ձեռքէն չի-  
թողար :

Նտքը ճամբորդները ծառի ճիւ-  
ղեր կտրեցին՝ ճաղի պէս բան մը  
չինեցին , դրին մէջը վիրաւորուած  
մարդը ու ճամբայ ելան . Նդիան ալ  
ձեռուրները կապած՝ ետևնէն կ'եր-  
թար : Քաղքին դուռը հասածնուն  
պէս մէկէն դացին քաղաքապետին  
հասկըցուցին բանը , Նդիան շրդ-  
թաներով կապած առին բանտ դը-  
րին . վասն զի վրան դանուած ժա-  
մացոյցէն , և վրան դուխը արիւնտա-  
րլալէն անտարակայս մտքերնին  
դրին որ յանցաւորը ինքն է : Կմա-  
ցան ալ թէ ով է վիրաւորուած մար-



դը . որ քաղքին երևելի վաճառա-  
կաններէն մէկն է եղեր . իր ընտա-  
նիքը երբոր լսեցին առ դիպուածը՝  
մեծ սուղի մէջ մտան . մէկէն բը-  
ժիշկ՝ վիրաբոյժ կանչեցին , նայե-  
ցան որ ամենեին ըսընտնալու պէս  
չէ :

Տես թէ ինչ եկաւ խեղճ Նղիային  
դիտուն , ան ալ անանկ տեղ մը որ  
ոչ ճանչուոր մը ունի և ոչ բարե-  
կամ . միայն իր մէկհատիկ հաւա-  
տարիմ՝ ընկերը իր շնիկն էր՝ որ քո-  
վէն չէր բաժնուէր : Քանի կը մտա-  
ծէր դիտուն եկածը , այնչափ մեծ  
կ'երևնար իրեն վիճակին խեղճու-  
թիւնը . միայն առ մէկ բանը կը մը-  
խիթարէր զինքը որ զոնէ քիչ մը  
բարիք կրցաւ ընել վիրաւորուած  
մարդուն :

« Մարդիկ կրնայ ըլլալ որ զիս  
դատաւարուն , կ'ըսէր . բայց Աս-  
տուած զիտէ թէ ես յանցաւոր չեմ ,  
ան ինձի բուսական է : Կամ ծնողքս  
հիմա պիտի լսեն դիտուս եկածը ,  
բայց ոչ երբէք պիտի հաւատան թէ



ևս աս յանցանքին տէրը ըլլամ, ոչ  
երբէք պիտի հաւատան թէ իրենց  
որդին աւաղակ եղեր է, ան այ՛ ճամ-  
բու վրայ աւաղակ » :

Երկրորդ օրը դատաւորները ե-  
կան բանտը որ քննեն աս մարդաս-  
պանութիւնը : Եղիան պատմեց ի-  
րենց հանդարտութեամբ ու պա-  
տուով տեղն ՚ի տեղը ամէն բան .  
յցուց իր վարպետներուն իրեն ա-  
ղէկութեանը ու հաւատարմութեա-  
նը համար տուած թղթերը :

Դատաւորները շատ կերպով տե-  
սակ տեսակ հարցմունքներ ըրին,  
որ կամ ծուռ՝ կամ իր դուրցածնե-  
րուն դէմ բան մը առնեն բերնէն .  
բայց Եղիան իր դուրցածներուն  
վրայ ամուր կեցաւ ու ամենեկին խօս-  
քը չիփփեց : Երբոր դատաւորնե-  
րը իրենց բանը լմընցուցին, Եղիան  
աղաչեց որ ըսեն իրեն, թէ արդեօք  
բժիշկները յոյս կուտան վիրաւո-  
րուած մարդուն ապրելուն : Դատա-  
ւորները պատասխան տուին թէ  
բժիշկները դեռ յոյսերնին չեն կըտ-



րած . բայց հիւանդին հարցընել չըլ-  
լար աս բանիս վրայ ինչուան տա-  
սը օրի չափ : « Աս ինչ մեծ աւետիս  
էր որ տուիք ինձի , ըսաւ Եղիան .  
թէ որ աս մարդը ապրելու ըլլայ ,  
անչուչտ ան դիս կը ճանչնայ , և  
գուք ան առեներ կ'իմանար , պարոն-  
ներ , թէ ես աւագակ չեմ » :

Դատաւորները մեծ համարմունք  
առին Եղիային վրան , տեսնելով  
իր հանդարտ ու անխուով խօսակ-  
ցութիւնը . և իրենցմէ մէկը դար-  
ձաւ ըսաւ ընկերներուն . « Ո՞վ տե-  
սեր է մէկ մարդասպան մը , որ իր  
ուղաննած մարդուն վրայ տեղեկու-  
թիւն ուղէ , իսկ ասիկայ անոր ներ-  
հակ՝ անանկ զուարթ ու անխուով  
կեցեր է որ անմեղ ըլլալուն մարդ  
չիկրնար տարակուսիլ » :

Բայց Եղիան դեռ բանտին մէջ  
թողուցին . անկողինը չոր խոտ էր ,  
կերակուրը սև հաց ու ջուր : Ան  
առեն խեղճ տղան միտքը բերաւ  
իր հօրը վերջի տուած խրատը , թէ  
մարդուս ինչպէս հարկաւոր է բա-



բեազաշտութիւնը . վասն զի մինակ  
ան էր որ ուժ կատար իրեն անանկ  
տաստիկ նեղութիւններուն համբե-  
րելու : Հարցոց թէ բանտին քա-  
հանային հետ կրնայ խօսիլ . խօսե-  
ցաւ հետը ու խոստովանեցաւ ա-  
նանկ ջերմեռանդութեամբ ու ցա-  
ւով , որ քահանան ալ դարմացաւ  
վրան . խոստացաւ միջնորդ ըլլա-  
լու իրեն համար դատաւորներուն ,  
որ իրեն քիչ մը թուլութիւն տան .  
և ըսածը կատարեց . վասն զի շրջ-  
թաները քակեցին , առջի տեղէն ալ  
հանեցին՝ ուրիշ սենեակ մը դրին :

Աս միջոցիս Եղիային բռնուիլը  
ու բանտ դրուիլը բոլոր քաղաքը  
տարածուեցաւ . և ինչպէս որ սովո-  
րութիւն է , ամէնքը մէյմէկ կեր-  
պով կը մեծցընէին յանցանքը : Եր-  
անունը և իր դադդիացի ըլլալը բո-  
լոր քաղքին մէջ խմացուեցաւ . և  
որչափ որ օտարական տղաք կային  
ան քաղքին մէջը իր արհեստէն ,  
ամէնքն ալ մտուրնին դրին որ եր-  
թան տեսնան իրենց դարբին ըն-



կերն ու թուքումուքով խաղբ ընեն :

Հետևեալ կիրակի օրը շատը դացին որ ճանչնան աս յանցաւորը : Ստոնց մէջը դանուեցաւ Նիկոլն ալ՝ Նդիային հին բարեկամն ու քաղաքացին : Սսիկայ բոլոր Գաղղիա ու Զուխցցերիի երկիրը պտըտելէն ետքը եկեր հասեր էր ան քաղաքը , ուր որ Նդիան բանա զրեր էին : Նդիան բանտին բակը կեցած ըլլալով , տեսաւ որ իր բարեկամը եկեղեցին կը մտնէր , մէկէն ճանչցաւ զինքը , և շատ ուրախութիւն ցցուց զինքը տեսնելուն համար :

« Կը յուսամ որ , ըսաւ , հրամանքդ ետ չես կենար տասնկ հարկաւոր ատեն ինծի օգնելու և վկայութիւն տալու իմ պղտիկութեան ատենէս ունեցած անմեղութեանս » : Նիկոլը մէկէն արհամարհելով , ու հարարտ կերպով մը պատասխան տուաւ . « Ես քեզի համար վկայ ըլլամ , ես զքեզ չեմ ճանչնար , ես քեզ կենացս մէջ տեսած չեմ , մար-



դատապան մարդու հետ եւ ի՞նչ բան  
ունիմ» : Աս անարդանքը , սա հը-  
սարտ խօսքերը՝ Աղիային սրտին  
մէյակէկ վէրք եղան , ու սկսաւ լալ :  
« Դու քու պատիժդ աղէկ զտեր ես »  
կանչեց Աիկոյը երեսին , ու թողուց  
ելաւ բանտէն :

Տասը օր անցաւ , Աղիան իր թը-  
շտառութենէն չիխալըսեցաւ . մի-  
այն Աստուծոյ նախախնամութեա-  
նը ասպախներ էր որ իր անմեղու-  
թիւնը դուրս հանէ :

Մէյակն ալ մէկ առաւօտ մը ա-  
ղօթք ընելու ատենը՝ բանտապետը  
եկաւ ըսաւ իրեն որ պիտի երթայ  
վիրաւորուած մարդուն հետ տես-  
նուի . վասն զի մեռնելու վտանդէն  
խալըսեր է անիկայ : Աղիան վեր-  
ցատքեց ուրախութեամբ , ելաւ դը-  
նաց բանտապետին ետեւէն . վեց  
դինուոր բանտին դրանը առջին  
պատրաստ կեցեր էին , որ ատին  
բերին դիմքը ինչուան հիւանդին  
տունը . նոյն միջոցին հոն հասան  
դատաւորներն ալ : Քիչ մը սպա-



անլէն ետքը տարին զինքը հիւանդ  
զին խուցը . ասոր գալը հիւանդը  
տեսածին պէս սկսաւ ուրախութե-  
նէն կանչել . « Տէր Աստուած , ա-  
հա իմ աղատիչս . ո՛վ աղնիւ տղայ ,  
եկո՛ եկո՛ իմ զիրկս . դուն ես ինձի  
աս կեանքս տուողը . թէ որ Աս-  
տուած զքեզ ինձի օգնութիւն խըր-  
կած չըլլար , ես հիմա մեռած էի » .  
աս ըսելով վիզը պլլուեցաւ սկսաւ  
լալ :

Հիմա մտածեցէք Նդիային ուրա-  
խութիւնը , որ իր անմեղութիւնը  
գորս ելաւ . մտածեցէք մէյմըն ալ  
հոն դանուող մարդիկներուն սիր-  
տը թէ ինչ եղաւ , երբոր տեսան  
ու լսեցին աս գործողութիւնները :  
Ամմէնքը մէկէն եկան Նդիային քո-  
վը , սկսան իրեն ուրախակից ըլ-  
լալ , ու մեծ համարմունք առին վը-  
րան : Բոլոր վաճառականին ընտա-  
նիքը իրմէ թողութիւն խնդրեցին  
որ փուճ տեղը այսչափ ատեն բան-  
տը կեցաւ , և խոստացան իրեն որ  
աս պատճառով իրեն որչափ վնաս



եղաւ նէ՛ ձեռքերնէն եկածին շափ  
վճարեն :

Բայց առաքինի տղան պատաս-  
խան տուաւ հեղութեամբ . « Ես ար-  
դէն իմ վարձքս առի՛ որ իմացան  
ամէնքը թէ ես անմեղ եմ . և ա-  
սանկ տուն տեղ ունեցող հայր մը  
մահուանէ խալըսելս իմ աչքիս դի-  
մացը բոլոր աշխարհիս օսկիէն ու  
փառքէն աւելի կ'ածէ » :

Աս վեհանձն ու առաքինի խօս-  
քերը երբոր մէկ աշխատաւոր տը-  
ղու մը բերնէն լսեցին՝ ամէնքը  
զարմացան , ու Եղիային անունը  
ինչուան երկինք բարձրացաւ :

Ասկէ ետքը յանձն առաւ Եղիան  
որ կենաց վաճառականին տունը .  
և ինքը սկսաւ հողալ զհիւանդը .  
մէկ ամսէն ետքը մեծ ուրախութիւն  
ունեցաւ որ հիւանդը բոլորովին ա-  
ռողջացաւ :

Վրան շատ ատեն շանցաւ , Աս-  
տուծոյ թոյլտուութեամբ բուն յան-  
ցաւորը բանուեցաւ : Ասիկայ դա-  
տարկապարտ մարդուն մէկն էր , որ



ուրիշ անդամ ալ բռնուեր էր, բայց վարպետութեամբ բանտէն փախեր էր. ուստի լեռնէ լեռ՝ անտառէ անտառ սլորտելով ամէն չարագործութիւն կը գործէ եղեր: Ս.ս անօրէնը զիշեր մը գեղի մը տիրոջ տունը մտեր է. դրանք բացուելէն ու շանը հաջելէն կ'արթըննայ տանտէրը, կ'առնէ լեցուն ատրճանակը՝ կը սխմէ ոտքին՝ կը վիրաւորէ, որ ալ չիկրնար փախչիլ: Ս.սանկ ձեռք իյնալէն ու բանտ դրուելէն ետքը, քննեցին իմացան որ ըրած չարութիւններուն չափ չիկայ. շատ մարդիկ ճանչցան զինքը, որոնք որ հանուեցուցեր էր, և վերջապէս ըրածներուն պատիժը դտաւ:

Վաճառականը Նդիային ընծայ տուաւ դտած ոսկի ժամացոյցը. եկամուտ մըն ալ կապեց իրեն որ առնով բոլոր կեանքին մէջ իր հացը դտնայ: «Վ'ուզես նէ տա քաղաքը կեցիր, ըսաւ իրեն. դրէ կանչէ ընտանիքդ ալ որ դան հոս, ու հոս ըրէ դարբնութիւնդ. ես ալ ինչ բանի



մէջ որ պէտք ըլլայ՝ կ'օգնեմ քեզի » :

Եղիան շնորհակալ եղաւ անոր բարի սրտին , և հասկըցուց՝ թէ իր միտքը ան է որ հայրենիքը դառնայ , ու ծնողացը ծերութեան ատենը անոնց մխիթարանքն ըլլայ : Բայց ճամբայ ելլելէն առաջ ցաւալի դիպուած մըն ալ հանդիպեցաւ :

Ան անդգամ Նիկոլը , որ անդուծ կերպով չուզեց ճանչնալ իր խեղճ անմեղ բարեկամը , աս միջոցիս կառք շինողի մը քով կ'աշխատէր՝ առանց փոխելու իր կեղծաւոր վարքը : Հաւասար օրէնք մէկզի թողուցած , մինակ ան կը նայէր որ դըրստանց մարդկանց աչքին աղէկ երևնայ , ներսը ինչ որ կ'ուզէ նէ ըլլայ :

Մէկ քանի խաղ սիրող արհեստակից տղոց հետ բարեկամ ըլլալով ամէն կիրակի օր կ'երթար քաղքէն դուրս տեղ մը՝ ատեն կ'անցընէր , և բոլոր շարժուման մէջ վաստակածը կը խաղար , ու դրեթէ ա



մէն անդամ բոլորն ալ կորսնցուցած տուն կը դառնար: Օր մը ասոր բախտը բանեցաւ որ յիսուն ֆիօրին վաստրկեցաւ. ասով նորէն խաղալու աւելի սիրտ առաւ. բայց աս յաջողութիւնը երկայն չիղնաց: Մէկէն էտեի կիրակի օրը բոլոր վաստրկածը կորսընցընելէն ետքը, ժամացոյցն ալ ձեռքէն ելաւ. աս բանիս ճարը դտնելու համար, դնաց խել մը ստակ փոխ առաւ, որ կարենայ նորէն ձեռք ձգել ժամացոյցը, բայց ան առածն ալ կորսընցուցու արամութեամբ տուն դարձաւ: Հիմա ինչ ընէ որ աս փորձանքէն խալըսի, ու պարտքը վճարէ, տես դտած ճարը: Իր վարպետին տանը քով պարտիդպան մը կը բնակէր որ շաբթուն մեծ մասը հեռու պարտէղի մը մէջ կ'աշխատէր: Նիկոլը աս բանս դիտնալով, մէկ իրիկուն մը պատէն անցաւ, մտաւ պարտիդպանին տունը, հոն սնտուկ մը բացաւ՝ մէջը հինգ հարիւր ֆիօրինի չափ ստակ դտաւ, ասոնք վերցը-



նելն ու դուրս փախչելը մէկ բրտա :  
Բայց հաղիւ թէ պատէն վեր պիտի  
ելլեր , մէյմըն ալ տեսնաս ճամբուն  
դուռը բացուեցաւ ու պարտիղպա-  
նը իր սղոցմովը ներս մտաւ , տե-  
սաւ որ պատին վրայ շարժմունք մը  
կայ , մէկէն վրան վազեց ու գողին  
ոտքը բռնեց : Նիկոլը որչափ որ  
ուժ ունէր կը թօթուէր որ փախչի  
պարտիղպանին ձեռքէն , բայց չի-  
կրրցաւ . վասն զի շուտով վրայ հա-  
սան կնիկն ու սղաքը , քաշեցին  
նորէն պարտէզը ինջեցուցին դողը :

Ստոնց կանչուրուտելէն դրացիքն  
ալ վազեցին եկան , և օղնութիւն  
հասնողներուն առջինը Նիկոլին  
վարպետն էր : Խեղճ արհեստաւ-  
րը ամօթէն ու զարմանալէն ինչ բ-  
նելիքը չէր դիտեր : Նիկոլը մէկէն  
տիրոջը ոտքն ինկաւ , սկսաւ լալով  
սղաշել պաղատիլ որ խնայէ իրեն ,  
ու չիթողու որ դատաւորի ձեռք իյ-  
նայ . կը խոստանար որ նոյն ստե-  
նը մէկէն գողցած ստակները ետ  
տայ , և խաղը պատճառ եղաւ իմ



աս չարիքը դործելուս կ'ըսէր . բայց  
ինչ օդուտ : Արդում պատառ կ'ըլ-  
լար թէ ասկէ վերջը վարքս կը փո-  
խեմ', մէյմըն ալ ասանկ բան չեմ  
ըներ : Ո՛վ մտիկ կ'ընէ :

Աս միջոցիս դատաւորին մարդի-  
կը հասան, բռնեցին տարին բանտ,  
և իր վճիռը մէկէն կտրուեցաւ . վասն  
դի ամենեին չէր կրնար ուրանալ  
իր վրայ եղած ամբաստանութիւ-  
նը, յանցանքը դործելու ատեն՝ ու-  
ստակը ձեռքը բռնուելուն համար :

Տես թէ աս տղուն վերջը ինչ ե-  
ղաւ, որ վարքը այնչափ տարբեր  
էր Աղիային վարքէն : Անիկայ եղ-  
բայրսիրութեան համար ամէն նա-  
խատինք յանձն առաւ, ինչուան  
մեռնիլ ալ թէ որ պէտք ըլլար նէ :  
Իսկ ասիկայ որ միայն մարդկային  
նկատմունքը իրեն կանոն բռներ  
էր, և անով կը ծածկէր իր յան-  
ցանքները մարդկանց առջև, ու  
դՄատուած և առաքինութիւնը ծաղր  
կ'ընէր, ետքը ետքը ինչպէս պատ-  
ժուեցաւ : Աղիան կրբոր բանտին



մէջն էր՝ հանդարտ կեցած կը սպասե-  
սէր որ Աստուած իր արդարութիւ-  
նը ցուցընէ : Նիկոլը անոր ներհակ  
բոլորովին յուսահատած , ժամէ  
ժամ կը սպասէր իր դատաւար-  
տութեանը վճիռը լսելու : Երկու ա-  
միսէն ետքը որոշուեցաւ որ տասը  
տարի կենայ բանտին մէջ . ահա աս  
կերպով տուժեց իր խաղի սէրը :

Եղիան ճամբայ ելլելէն առաջ  
լսեց իր քաղաքացիին բանտ մտնե-  
լը , գութը շարժեցաւ , և ուզեց չա-  
րութեանը տեղ բարիք ընել . ելաւ  
զնայ բանտ , գտաւ դիները , խօսե-  
ցաւ հետը , ու ձեռքէն եկածը ըրաւ  
իրեն : Աս վեհանձնութիւնը տես-  
նելով , աւելի մեծ համարմունք ա-  
ռին վրան ուրիշները . Նիկոլն ալ  
ապշեցաւ մնաց , ու լալով բռնեց  
Եղիային ձեռքը , աս խօսքերս ը-  
սաւ իրեն . « Ար տեսնա՞ս իմ խեղ-  
ճութիւնս , ի՞նչպէս իմին կեղծաւո-  
րութեանս պատիժը գտայ : Գուն  
Աստուծոյ վախը միշտ աչքիդ առ-  
ջին ունենալով , նայեցար որ իր կամ



քին դէմ բան մը չընես . իսկ ես  
մինակ աս նայեցայ որ մարդկանց  
առջևը դէշ չերենամ . անոր համար  
հիմա կը քաղեմ իմ աշխատանացս  
դառն պտուղները : Գու հիմա կ'եր-  
թաս հայրենիքդ կը դառնաս , քու  
ծնողքդ պիտի ուրախացընես . ես  
հոս բանտի մէջ տրամութեամբ փը-  
ճացընեմ պիտի իմ կտրճութեանս  
օրերը : Միայն աս կ'աղաչեմ քեզի  
Նղիա , չըլլայ որ իմ խեղճ ծեր հօրս  
պատմես իմ գլուխս եկածը , չըլ-  
լայ թէ ըրած յանցանքս իմանայ ու  
ցաւի » : Աս խօսքերս դուրցելու ա-  
տեն սիրտը ելաւ ու սկսաւ լալ :

Նղիան յիսուն Ֆիօրին տուաւ ի-  
րեն , գրկեց պազտուեցաւ հետը .  
սիրտ տուաւ որ սիրով համբերէ իր  
յանցանքին պատիժը վճարելու հա-  
մար : Խօսք տուաւ ալ որ անոր ծնո-  
ղացը ամենևին բան մը չիզուրցէ ,  
և այսպէս լալով մէկմէկէ բաժնուե-  
ցան :

Մէկ քանի օրէն ետքը Նղիան  
հասաւ Գաղղիա , գտաւ իր ծնող-



քը ողջ առողջ և ուրախ . հոն սկը-  
սաւ իր օրերը երջանկաբար անցը-  
նել : Իր խանութին դրանք վրայ  
փորել տուաւ ան խօսքերն որ իրեն  
այնչափ երջանկութեան պատճառ  
եղան , այսինքն թէ

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿԻՉԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ

ՎԱԽՆ Է :

Տղաքը սիրով մտիկ ըրին աս եր-  
կայն պատմութիւնը , և մտքերնէն  
դովելով Նդիային բռնած ճամբան ,  
առաջադրեցին որ իրեն նմանին , և  
ուրախութեամբ տուն դարձան :

---



## ԵՐԿՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Հնազանդութիւն :

Մարկեղոսին տղաքը անանկ դուարճացեր էին իրենց վարպետին պատմած պատմութենէն, որ օրէ օր կը սպասէին՝ թէ երբ պիտի դայ հինդշաբթի օրն որ նորէն իրենց վարպետին տունը երթան պատմութիւն լսելու : Ա երջապէս հասաւ ան փափաքելի օրը . քահանան ալ սկսաւ ասանկ ըսել իրենց .

« Միրելիք, ամէն հինդշաբթի ձեզի մէյմէկ լսելք սորվելու բաներ պատմելովս՝ միտքս աս է որ դձեզ աղէկ ըլլալու յորդորեմ, աւետարանին սքանչելի խրատները դործքով խնչպէս կատարել կ'ըլլայ՝ ձեզի հասկըցընեմ, և սրտերնուդ մէջ



առաքինութեան փափաքը վառեմ :  
Սա վախճանիս համար կ'ուզեմ ըզ-  
ձեզ զուարճացընելով կրթել . ուս-  
տի առջի սլառամութիւնը Սատուծոյ  
վախին ու մարդկային նկատմանը  
վրայ էր . այսօր կ'ուզեմ խօսիլ հը-  
նազանդութեան վրայ :

Ճերմակ ծովին մէջ Հռոդոս ա-  
նունով կղզի մը կայ , որ մէջի դե-  
ղեցիկ սլառուներուն՝ ազնիւ մեղրին  
ու ձիւնի պէս ձերմակ մեղրամովին  
համար խիստ անուանի է : Սա կըզ-  
ղիին մէջի գլխաւոր քաղաքը աղէկ  
նաւահանգիստ մը ունի . աս նաւա-  
հանգստին բերանը երկու ժայռ  
կայ , անոնց վրայ ալ երկու աշտա-  
րակ շինած է : Սա աշտարակնե-  
րուն տեղը Հռոդոսի հին բնակիչ-  
ները Քրիստոսէն 700 տարի առաջ  
Սպողոն կուռքին արձանը կեցու-  
ցեր էին՝ թափօն պղնձէ՛ եօթա-  
նասուն ոտք բարձրութեամբ : Ա-  
նանկ մեծ էր աս արձանը՝ որ մէկ  
մատը մարդ մը հազիւ կրնար դըր-  
կել , և խոշոր նաւերը համար-



ձակ կը մանէին կ'ելլէին երկու ոտքին մէջտեղէն : Արձանին ներսի դին սանդուխ մը կար . անկէ ամէն իրիկուն վեր կ'ելլէին՝ արձանին ձախ ձեռքի բռնած կանթեղը կը վառէին՝ որ նաւերը լոյս տեսնան : Պլխուն վրայ ոսկեղօծ ճառագայթ մը կար , որ արևը վրան զարկած աւենը՝ զարմանալի կերպով կը փալփրլէր , իսկ աջ ձեռքը աղեղ ու նետ բռնած էր : Աս ահագին արձանը , որ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկը կը սեպուէր , մէկ գետնաշարժէ մը կործանեցաւ՝ յիսունըվեց տարիէն ետքը : Անսպասիանոս կայսրը Քրիստոսի 69 թրւականին նորէն տեղը դնել տուաւ . բայց 667ին երբոր արաբացիք Հոռոզոսը առին , աս արձանն ալ կործանեցին . և Մուավիէ ամիրապետը հրէի մը ծախսեց պղինձը , որ հարիւր ուղտի բեռ եղաւ :

Գիտէք որ 1099ին խաչակիրները Երուսաղէմ քաղաքը առին . անտունը նէապոլսեցի վաճառական



ները, որոյն Յովհաննու երուսաղեմացոյ ասպետութեան կարգը հաստատեցին, որ վերջերը Մալթայի ասպետ ըսուեցան: Երբոր նորէն Երուսաղէմ արաբացոյ ձեռքը անցաւ, ասոնք հրաման առին ամիրապետէն ու վանքի պէտտեղ մը շինեցին Երուսաղէմին մէջ, որ իրենք հոն նստին, ու Եւրոպայէն Երուսաղէմ եկող ուխտաւորները հոն իջնալու տեղ գտնան: Աս արդատութեանը փոխարէն՝ իրենք ալ ամէն տարի տուրք մը կուտային արաբացոյ: Իրեք ուխտունէին ասոնք. կուսութիւն, աղքատութիւն ու հասարակասիրութիւն. ետքը չորրորդ ուխտ մըն ալ աւելցուցին որ Երուսաղէմ գացող քրիստոնեայ ուխտաւորներուն պաշտպանութիւն ընեն աւաղակներուն ձեռքէն:

Երբոր 1187ին Մալաղին խալիֆան Երուսաղէմը առաւ, որոյն Յովհաննու ասպետները փախան Աբեա քաղաքը, անկէց ալ 1291ին



նորէն փախտան դացին Արարոս կը դ-  
դին : Ատքը 1510ին առին նաև Հոռ-  
դոսը , և հոն ամուր բերդեր շինե-  
ցին՝ բարբարոսաց ձեռքէն խալը-  
սելու համար :

Աս ասպետները խիստ շատուոր  
էին . վասն զի Արտաղայի մեծամեծ-  
ներուն դակընները աս կարգը մը ա-  
նելը իրենց մեծ փառք կը սեպէին :

Սեպտեմբեր ամսուն մէջ հինգ-  
շաբթի օր մը օդը խիստ դեղեցիկ  
ըլլալուն՝ բոլոր Հոռդոսին քաղա-  
քացիքը տներնուն դիմացը ելեր  
նստեր էին : Մէյմըն ալ տեսնաւ  
խել մը ժողովուրդ թափեցան աս-  
պետներուն վանքին դիմացը ուրա-  
խութեամբ , պռուպով կանչուրու-  
տելով . անանկ որ ասոնց աղաղա-  
կէն բոլոր քաղաքը սկսաւ թնտալ :

Ան բազմութեան մէջը մէկ կը տ-  
րիճ երխտասարդ ասպետ մը աղուոր  
ձիու մը վրայ հեծած , ոտքէն ին-  
չուան զլուխը դէնք ու դրահ , թու-  
րը նիզակը արիւնտա , դէպ 'ի վան-  
քը կ'երթար . ետևէն խել մը սրտի՞



չներ, ժողովուրդն ալ անոնց ետևէն  
ահադին կոկորդիլոս մը բռնած կը  
բերէին :

Աս սոսկալի դադանիս զլուխը  
կարծես թէ երկըթէ էր. վրան հաստ  
կաշիի պէս թեփով ծածկած. բե-  
րանը խոր անդունդ կը նմանէր,  
չորս դին խոշոր խոշոր սուր ակուս-  
ներով. աչուրները անանկ կը վառ-  
վրուէին որ տեսնողը ողջ կը կար-  
ծէր : Առնակը ուռած ու ծալք ծալք  
եղած էր, որով կ'իմացուէր թէ ինչ  
պէս դիւրաւ կը շարժի ու կը դարձ-  
մըրձկի եղեր : Պոչ մը ունէր որ  
դարկածը մէկէն գետինը կը փռէր :

Իսկ ժողովուրդը անդադար աս-  
պետը ցուցընելով կը պոռային ճամ-  
բուն վրայ. « Ասիկայ է կ'ըսէին՝ ան  
կտրիճը, ան քաջ ու սրտոտ աս-  
պետը որ սպաննեց կոկորդիլոսը :  
Ան կոկորդիլոսն որ այսչափ ատե-  
նէ 'ի վեր կը ջարդէր կը մեռցընէր  
մեր ոչխարներն ու հովիւները, և  
այնչափ կտրիճներ շիկրցան անոր  
հետ զլուխ ելլել. աս ասպետիս պա-



հեր է եղեր Աստուած աս մեծ փառքը . ասոր ձեռքովը խաղաղութիւն պիտի դանէ եղեր մեր երկիրը . Աստուած երկայն օրեր տայ մեր ասպետին , որ մեզի ասանկ մեծ բարիք ըրաւ » : Ասանկով երբոր հասան վանքին դրանն առջեր , ասպետը ձիէն վար իջաւ , մտաւ ներս , ժողովուրդն ալ ետեւէն : Մեծաւորը վերէն տեսնելով ժողովուրդը , ասպետը , կոկորդիլոսը , բանը իմացաւ . մէկէն նշան տուաւ զանգակով , ասպետները դուրս ելան իրենց խուցերէն , ու ժողովուցան մեծաւորին խուցը : Ինքը ելաւ նրատաւ իր աթոռը , ասպետները չորս դին կարգաւ շարուած կեցան . ժողովուրդն ալ առին կտրիճ ասպետը ներս բերին : Անիկայ կամաց կամաց քալելով առաջ եկաւ . ազնուականութիւնն ու քաջութիւնը երեսէն կ'իմացուէր , աչուրներէն կը տեսնուէր սրտին կտրճութիւնն ու ուրախութիւնը : Խոնարհ կերպով մը զնաց ծռեցաւ բարեւ տուաւ .



մեծաւորին և իր ընկերներուն , ու  
ըսաւ .

« Փառք տանք Աստուծոյ , հարք  
իմ և եղբարք , որ իմ աշխատանքս  
փութը չիհաննեց , և իմ ձեռուրներս  
զօրացուց . ուժ տուաւ ինձի որ կա-  
րենամ սպաննել ատ դադանը , որ  
այսչափ ատեն կ'աւրէր կ'ապակա-  
նէր բոլոր կղզին , ու կը վախցընէր  
բոլոր բնակիչները . ահա հոս հիմա  
ձեր առջին փութած կեցեր է ան կո-  
կորդիլոսը : Ասկէ վերջը չիկրնար  
ասիկայ ուխտաւորներուն արգելք  
ըլլալ , որ երթան տեսնան լեռան  
վրայի Աստուածածնայ հրաշագործ  
պատկերքը . հովիւները համարձակ  
կրնան ասկէց ետքը իրենց ոչխար-  
ները տանիլ ծովեզերքը արծեցը-  
նել . ճնողք՝ ալ չեն վախնար թէ ի-  
րենց տղաքը կը կորսուին » :

Մեծաւորը ծուռ ծուռ նայեցաւ  
վրան ու դարձաւ ըսաւ . « Արդեակ ,  
իրաւ որ մեծ կարծութիւն ըրիր որ  
խալըսեցիր բոլոր կղզիս ատ սոսկա-  
լի դադանին ձեռքէն . քաջութիւնը



մեզի պէս ասպետներուն մեծ պատիւ է . և աս ըրած գործքովդ դուն ալ յայտնի երեցուցիր քու քաջութիւնդ : Բայց դուն չէ թէ միայն աշխարհական զինուոր ես , հասլանակ Քրիստոսի զինուոր ես . աս խաչն որ հագուստիդ ու զէնքերուդ վրայ դրած է , քեզմէ ուրիշ բաներ ալ կը պահանջէ : Արեմն ըսէ տեսնամ , Քրիստոսի զինուորին առջի պարտքն որն է » :

Աս միջոցիս բոլոր կեցողներուն երեսին գոյնը նետեց : Դարձաւ պատասխան տուաւ ասպետը աղնուական կերպով մը . « Քրիստոսի զինուորին առջի պարտքը հնազանդութիւնն է :

— Բայց դուն որդեակ , ոտքի տակ առիր աս հնազանդութիւնը , ու չիպահեցիր՝ կոկորդիլոսին հետ չիկոտելու հրամանը . ան դադանը այնչափ մնաս տալ չէր կրնար , որչափ որ կուտայ աս հպարտութիւնն որ խաբեր է գքեզ :

— Տէր իմ , տեղն 'ի տեղը չիլը-



տած՝ կ'աղաչեմ որ զիս շիղատա-  
 պարտես : Աս իրաւ է որ դրսուանց  
 յանցաւոր կ'երևնամ . բայց յուսամ  
 որ ինչ պատճառով աս բանիս ձեռք  
 դարնելս իմանար նէ՛ անով զիս  
 կ'արդարացընէք : Ամէնքդ զիտէք  
 թէ մեր ընկերներէն հինգ հողի սիրտ  
 ըրին կոկորդիլոսին հետ կուտելու ,  
 և ամէնքն ալ յաղթուեցան ու իրեն  
 կերակուր եղան : Աս բանէս հրա-  
 մանքիդ գութը շարժելով՝ ամենուս  
 արդիլեցիք որ մէյմըն ալ չելլանք ան  
 դադանին վրայ , որպէս զի չըլլայ  
 թէ նորէն արիւն ըլլայ : Աս արդել-  
 քը իմ սրտիս մեծ ցաւ եղաւ . զի-  
 շեր ցորեկ կը մտածէի ճար մը դրա-  
 նել աս դադանը սպաննելու . եղեր  
 է որ ինչուան զիշերը երազիս մէջն  
 ալ հետը կուտեր եմ . և անանկ որ  
 հետևեալ օրը երբոր նոր փորձանք  
 մը կը լսէի , սիրտս կ'ելլար , ու ես  
 ինձի կ'ըսէի . Ո՞րն է մէկ երիտա-  
 սարդ ասպետի մը փառքը . ինչ ը-  
 րին ան քաջ մարդիկը որոնց անու-  
 նը մենք ամէն օր երգերնուս մէջ



կը յիշենք : Ինչո՞վ հին ատենի մար-  
դիկը չաստուածներու կարգ անցան-  
ու սկսան պաշտուիլ : Ասան զի ի-  
րենց երկիրը դադաններու աւա-  
դակներու ձեռքէ խալըսեցին : Ի-  
րենց արիւնը թափելը աչուրնին ա-  
ռին , որպէս զի զուրիշները բռնա-  
ւորներու ձեռքէ խալըսեն : Մեր  
պարտքը չէ թէ մինակ անհաւատ-  
ներուն դէմ կռուիլն է , հապա նաև  
ամէն բանի մէջ օգնել մեր եղբայր-  
ներուն : Մենք մեր կտրճութեամբը  
մէյմէկ վահան պիտի ըլլանք բոլոր  
խեղճ քրիստոնէից : Բայց ամէն  
բանի մէջ ալ խոհեմութիւնն ու ի-  
մաստութիւնը պիտի առաջնորդէ  
մեզի . ուժին հետ մէկտեղ խորա-  
դիտութիւն ալ պէտք է , մանաւանդ  
երբոր ասանկ թշնամիի մը դէմ եր-  
թալու ըլլանք նէ : Ասոնք մտածե-  
լով սիրտս վառուեցաւ , ելայ ճամ-  
բայ , առանց դիտնալու թէ ո՞ւր կը  
կենայ աս դադանը . մէկուն մէկա-  
լին հարցընելով իմացայ տեղը .  
զայցի տեսայ , ու մտքիս մէջ տպա-



որոնցաւ իր մարմնոյն ձեռ : Դառնալէս ետքը հրաման ուղեցի հրամանքէդ որ իմ հայրենիքս երթամ քիչ մը ատեն հանդչելու . սիրով հրաման տուիք : Տուն հասնելու պէս մէկէն դացի դտայ վարպետ մարդ մը որ կարենայ ձեացընել շինել տեսած կոկորդիլոսիս նմանը , որուն ձեռ դեռ մտքիս մէջն էր : Շուտ մը սկսանք երկուքնիս աշխատիլ , և քիչ ատենի մէջ ահագին վիշապ մը շինեցինք : Առաջ ես պատկերքը քաշեցի , ետքը նմանը շինեցինք : Գրի ասիկայ գետնին վրայ ու սկսայ անոր վրայ վազելով կրթութիւն ընել՝ զինքը սպաննելու համար : Երկու հաւատարիմ որսի շներս հետս առած հեծայ կտրիճ ձիուս վրայ ու սկսայ դադանին վրան վազել . նշան կուտայի շներուն որ յարձրկին դադանին փորուն տակը մտնան . ես ալ ձիուս սանձը թողուցած՝ անոր վրայ կը յարձրկէի : Առջի բերանը ձիս ու շներն առ ահագին վիշապը տեսնելուն պէս



սկսան վախնալ . բայց ես նորէն  
սկսայ կռուիլ : Մէկ ամիսի մը չափ  
ասանկ փորձ ընելէն ետքը վարժե-  
ցան շներս ու ձիս , ու վիշապը կը-  
տոր կտոր ըրինք : Ան ատենը ելայ  
մեր տնէն ու նորէն դարձայ հոս :  
Հազիւ թէ նաւէն դուրս ելայ , ժողո-  
վըրդեան խեղճութիւնը մէկէն առ-  
ջևս ելաւ . ամենուն բերանը ողբ ու  
լաց , ամէնքը ախ վախ կը կանչէին  
աս դադանիս ձեռքէն : Արիւնս սկը-  
սաւ եփիլ . սիրտս չիղիմացաւ ժողո-  
վըրդեան խեղճութեանը . միտքս դրի-  
որ ես աս դադանս մէջտեղաց վեր-  
ցընեմ : Հասկըցուցի միտքս իմ ձիա-  
պաններուս , առի շներս , և սկսայ  
երթալ դէպ'ի դադանին բոյնը : Չիս  
ալ կարծես թէ միտքս իմանալով  
սկսաւ սրտոտ կերպով մը առաջ  
երթալ :

« Գիտէք հրամանքնիդ ան լեռան  
վրայի մատուռը , ուր որ Աստուա-  
ծածնայ գեղեցիկ պատկերք մը կայ'  
Յիսուս գիրկը և իրեք մողերուն եր-  
կըրպագութիւնը քաշած : Արտուն-



ուիրերք ոտք բարձր է աս լեռը . մէկ  
ծայրը ինչուան ծովեղերքը տարա-  
ծուած է պատի պէս . տակը խո-  
րունկ ու մութ քարանձաւ մը կայ ,  
դուռը խոտերով ու վշերով ծած-  
կած . հոն քաշուած կը սպասէր աս  
գազանը իրեն որսը գտնելու : Ան  
տտենը ձիէս վար ինջայ , ապապրե-  
ցի ձիապաններու որ սպասեն ին-  
ծի , ու ես ելայ մատուռը գացի , Յի-  
սուսին ոտքն ինկայ , մեղայ ըսի ու  
մեղքերուս թողութիւն ուզեցի : Ին-  
ծի այնպէս երեցաւ թէ փրկիչը լսեց  
իմ աղաչանքիս , և խոստացաւ ին-  
ծի օգնելու . ես ալ միտքս դրի թէ  
պիտի յաղթեմ . ալ վախ չիմնաց  
սիրտս . ոտք ելայ , հանեցի թուրս՝  
Աստուծոյ նուիրեցի : Իջայ վար ,  
հեծայ ձին , յանձնեցի դիս նորէն  
Աստուծոյ , ու սկսայ առաջ երթալ :  
Հաղիւ թէ կտոր մը տեղ գացի ,  
չներս տեսան կոկորդիլոսը՝ խոտին  
վրայ բերանը բաց պառկած . բայց  
ոչ անոնք և ոչ ձիս սիրտ ըրին վը-  
րան վաղելու : Ան տտեն ես սկսայ



ձեռքով ձայնով գրգռել զիրենք .  
մէյմըն ալ սոսկալի կատաղու-  
թեամբ մը վազեցին վրան , ես ալ  
տէգովս սկսայ դարնել դադանին ,  
բայց ի՞նչ օգուտ , տէգս ծալլուե-  
ցաւ ծռեցաւ , ու անոր կաշիին բան  
մը չեղաւ : Չիս խրտեցաւ կատողե-  
ցաւ , սկսաւ ետ ետ երթալ . ան մի-  
ջոցին Աստուած ինձի լոյս տուաւ ,  
ցատքեցի վար ձիէն , թուրս քա-  
շեցի . ելայ դադանին վրան , բոլոր  
ուժովս սկսայ կռնըկին դարնել .  
բայց անիկայ պոչովը մէյմը ինձի  
դարնելուն պէս , դիս դետնին երե-  
սը փռեց . ես ալ միտքս դրի թէ հի-  
մա կտոր կտոր պիտի ըլլամ : Բայց  
չներս դադանին շարժիլը տեսնելով  
մէկէն վրան թափեցան ու սկսան  
կուրծքը խածխըծել , որ անտեղի  
կաշին կակուղ ու բարակ էր : Մէ-  
կէն ոտք ելայ ես , ոչ անոր պոռա-  
լուն նայեցայ , և ոչ սոսկալի կա-  
տաղութեանը . բոլոր ուժովս խո-  
թեցի թուրս փորը ու մէկէն դուրս  
քաշեցի . մէյմըն ալ դարկի , որ խո-



չոր վերք մը բացուեցաւ վրան , ու  
ճիւթի պէս սև արիւնը թնի հաս-  
տութեամբ սկսաւ դուրս վազել :  
Տապըլտկեցաւ դազանը , ու դիւս նո-  
րէն գետինը դարկաւ . ես ալ ինք-  
զինքս ան միջոցին կորսընցուցի :  
Քիչ մը ատենէն խելքս զլուխս ե-  
կաւ , աչքս բացի տեսայ որ ահա-  
դին դազանը սատկեր կեցեր է » :

Աս խօսքերուս ատենը բոլոր մը  
տիկ ընողները սկսան դուլել , կան-  
չուրուտել ու հարցընել թէ ինչ է ա-  
նունը աս քաջ ասպետին՝ որ բոլոր  
կղզիիս ասանկ մեծ բարիք ըրաւ :  
Մէկալ ասպետներն ալ սկսան ա-  
դաչել իրենց զլխաւորին որ մէկ  
պսակ մը պատրաստէ աս ասպե-  
տիս համար :

Մեծաւորը հրամեց որ լռութիւն  
ըլլայ . ետքը ծուռ ծուռ երեսը նայ-  
ելով դարձաւ ըսաւ ասպետին .  
« Քու քաջութիւնդ արժանի է դո-  
վեստի , որդեակ իմ , խօսք չունիմ .  
քաջութեամբ պատերազմեցար , ու  
բոլոր աշխարհիս առջև մեծ անուն



հանեցիր . բայց դիտնաս որ դադան  
մը սպաննելու համար՝ սրտիդ մէջ  
ուրիշ դադան մը մեծցուցիր որ մե-  
ռուցածէդ հազար անգամ մեծ է :  
Եւ ահա ատ դադանը որ մարդուն  
սիրտը կը թունաւորէ , ու մեր միա-  
բանութեան կործանմանը պատ-  
ճառ կ'ըլլայ՝ անհնազանդութիւնն ու  
խօսք մտիկ չընելն է : Քրիստոնեայ  
դինուորը հնազանդութեամբ միայն  
կը տարբերի անհաւատ դինուորէն :  
Մենք Յիսուսի աշակերտ պիտի ըլ-  
լանք , որ ամէն բանի մէջ հնազան-  
դեցաւ իր երկնաւոր Հօրը , և յանձն  
առաւ խաչի վրայ մեռնիլ՝ մեզի հնա-  
զանդութիւն սորվեցընելու համար .  
և մեր առջի պարտքը կամքերնիս  
կոտրելն է : Աւտի աս բանիս հա-  
մար , որդի՛ անհնազանդ , կը հրա-  
մայեմ քեզի որ հիմա աս վայրկե-  
նիս ելլես երթաս աս սուրբ տեղէս .  
ու մէյմըն ալ աչքիս շերենաս . վասն  
դի ով որ Քրիստոսի լուծը չուզեր  
վիզը առնել , անիկայ Քրիստոսի  
խաչին դրօշակին տակը չիկրնար  
պատերազմիլ » :



Աս խօսքերէս խեղճ ասպետը երեսին դոյնը նետած՝ գլուխը կախած մեծ յանցաւորի մը պէս մէկդի քաշուեցաւ: Ժողովուրդը ձայնը բարձրացուց ու սկսաւ տակն ու վրայ ըլլալ ալէկոծեալ ծովի մը պէս. մէկալ ասպետները տեղերնէն ելան, մեծաւորին չորս դին առած սկսան թողութիւն խնդրել իրենց յանցաւոր եղբօրը համար. բայց մեծաւորը ամենեկին մտիկ չըրաւ:

Ասպետը հանեց դրաւ իր դրահն ու դէնքերը դրան առջնը, եկաւ նորէն ամենուն կեցիք բարով ըսաւ, թողութիւն ուզեց մեծաւորէն ու ելաւ դնաց:

Վանքին դուռը հասաւ չիհասաւ, մէկէն մեծաւորը ելաւ աթոռէն, վաղեց ետեէն, ու սկսաւ կանչել. « Ա՛հ, եկու գիրկս, եկու իմ սիրելի որդիս, ահա հիմա իրաւցընէ մեծ յաղթութիւն ըրիր, վասն զի դուն քեզի յաղթեցիր: Ա՛ռ աս պսակը որ քու հնազանդութեանդ ու խոնարհութեանդ վարձքն է. ասկէ



վերջը իրաւունք ունիս պարծենալու իբրև քրիստոնեայ ասպետ մը . ինձմէ ետքը առջինը դու ես աս վանքիս մէջ . վասն զի դրած է , թէ « Լա է հնազանդութիւն քան ըզդոհ ընտիր » . և « Ո՛վ որ կը խոնարհի՝ կը բարձրանայ » :

Աս ատենը ամէնքը ուրախակից եղան ասպետին աս ըրած նոր ճշմարիտ յաղթութեանը վրայ , ըսելով թէ ճշմարիտ քաջ մարդը ան է , որ իր հպարտութեանը ու կամքին կը յաղթէ :

Աս դուրցելով ոտք ելաւ աւադերէցը . Մարկեղոսին տղաքն ալ շատ շատ շնորհակալ ըլլալով իրմէ դարձան տեղերնին :



## ԵՐՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Երասխտագեալ տղայ .

Հարիւր տարիի չափ կայ որ Ռոն  
դեափն քովերը դեղեցիկ ձորի մը  
մէջ կը բնակէր Փեններ անունով  
բարեպաշտ ու աշխատասէր երկրա-  
դործ մը՝ ութը դակի տէր : Իր կեան-  
քը առջի նահապետներուն կեան-  
քին կը նմանէր , ինչու որ միշտ ա-  
դօթք կ'ընէր ու կ'աշխատէր : Աս-  
տուած իրեն մեծ հարստութիւն չէր  
տուած . տնակ մը ունէր որ հաղիւ  
իր տնեցոցը կը բաւէր , կտոր մը  
երկիր ունէր՝ պէտք եղած բաները  
ցանելու համար , և պղտի դաշտ մը ,  
ուր իրեք հատ կով ու վեց հատ այծ  
կ'արածէին . սա էր ահա բոլոր իր  
ունեցած մեծութիւնը : Բայց ինքը



անբաւ դանձ դիպեր էր առաքինութեամբ . և կը ջանար իր տղաքն ալ անանկ կրթել բարեպաշտութեան մէջ . և երբոր կը տեսնար որ տղաքը չորս դին առած կեցեր են առողջ ուրախ ու անմեղ , աշխարք իրեն կ'ըլլար :

Օր մը իրիկուն րէմ' երբոր տուն կը դառնար , տղաքն ալ հետը մէկտեղ դործիքները կոնակնին շալկած , տեսաւ հինդ տարեկան տղայ մը որ ցանկի մը քով նստէր կ'ուլար : Հարցուց իրեն Փեններ . « Ի՞նչ բան ունիս հոս որդեակ » : Տղան առանց պատասխան տալու կուլար : « Ո՛րկէ կուգաս . ծնողքդ ո՛ր են » : Խեղճ տղան կակաղելով մէկ երկու խօսք դուրցեց . բայց որոշ բան մը չիկրցաւ հասկըցընել : « Եւ երթանք մեր տունը , ըսաւ Փեններ , աս իրիկուն հոն կը մնաս . վաղը առտու կ'ելլենք կը փնտռենք քու ծնողքդ ու կը տանինք կը յանձնենք դքեղ իրենց » : Ան ատենը երկրադործին մեծ որդին շալկեց առ



Վիշենն անուճով տղան , ու բերաս  
տուն : Ան իրիկունը մէկալ տղոց  
հետ մէկտեղ ուրախութեամբ կե-  
րաս խմեց , ու անուշ քուն մը քա-  
շեց ան գիշերը :

Առաւօտը ելաւ Փեններ , դնաց  
բոլոր քովի գեղերը հարցուց տղուն  
ճնողացը վրայ , բան մը չիկրցաւ  
խմանալ : Ան ատենը դնաց գեղա-  
պետին հասկըցուց տղուն բանը՝ ա-  
ղաշեց որ ինքը փնտռէ դռնէ խեղճ  
տղուն ճնողքը . խակ ինքը յանձն  
առաւ իր քովը պահել տղան՝ ին-  
չուան որ հայրը մայրը դռնուին :

Գեղապետը ասդին անդին թուղթ  
դրեց որ տեղեկանայ , բայց ամե-  
նեին զիտցող չիկար : Արբոր ողոր-  
մած ծերը խմացաւ թէ ասանկ է բա-  
նը , ըսաւ ուրախութեամբ . « Արով-  
հետե հայրը կորսնցուցեր է աս տը-  
ղան , ես իրեն հայրութիւն կ'ընեմ  
ու կը կրթեմ զինքը . թող իմ տը-  
ղոցս հետ կերակուր ուտէ . ես ալ  
իմ տղուս պէս կը նայիմ վրան » :

Վիշենը քանի որ մեծցաւ նէ՛ վը-



րան սքանչելի կատարելութիւններ  
սկսան երևնալ . բնութիւնը անուշ ,  
բարակամիտ և բարեսիրտ տղայ մը  
եղաւ : Ամէնուն կը ջանար ծառա-  
յութիւն մը ընել . ձեռքէն եկածը  
սիրով կ'ընէր . ամէնքը ղինքը կը  
սիրէին , և կ'ըսէին թէ ասոր ջան-  
քը անշուշտ ան է որ իր աղէկու-  
թեամբը մեզմէ տեսած բարիքը վը-  
ճարէ . իր բարեպաշտութիւնը , իր  
աշխատասիրութիւնը , իր հնազան-  
դութիւնը՝ Փեններին տղոցը բարի  
օրինակ եղած էր :

Շատ տարիներ անցան ասանկ ,  
և Վիչենը միշտ իր նոր ծնողացը  
ուրախութեան պատճառ եղաւ :  
Առջի անգամ հաղորդութիւն առ-  
նելուն մեծ ջերմեռանդութիւն ցը-  
ցուց , և անկէ ետքը սկսաւ ալ ա-  
ղէկ ըլլալ . ջանալով օրէ օր աղէկ  
կատարել լսած խրատները :

Քիչ ատենէն ան երկրին մէջ մեծ  
չորութիւն ու սով ընկաւ . մայիս  
ամսէն ինչուան սեպտեմբեր դնաց  
սովը , ու բոլոր երկրոցիք մեծ նե-



դուժեան մէջ ընկան . ծառերը խոտերը սկսան չորնալ . ցորենները էրեցան խանձեցան . արմախքը շիրուսան , որ երկրագործներուն բուլոր յոյսը անոնց վրայ է , Ռոն դետն ալ ցամքեցաւ :

Վիչենը թէպէտ և պզտիկ էր , բայց կ'իմանար թէ ասոր ծայրը դէշի պիտի երթայ : Գիտէր որ Փեններին ունեցածը քիչ ատեն կը բաւէր այնչափ ընտանիքը պահելու . և քանի որ կը մտածէր թէ ինքն ալ ան պատուական մարդուն ծանրութիւն է , սիրտը կը կըտրտէր : Շատ անգամ կը մտածէր որ մէկ կերպով մը փախչի տնէն , երթայ ուրիշ տեղ մը իր հացը ճարէ . կամ մէկուն քովը ծառայութիւն ընէ ստակ վաստըկի . բայց կը վախճար թէ յանկարծ յոյսը պարապ կըրնայ ելլալ , և ինքն ալ անօթութենէ կը մեռնի : Անոր համար ալ աղէկ սեպեց որ իր աղէկ աշխատելովը Փեններին ողորմածութեանը մէկ կերպով մը հատուցմունք ընէ :



Օր մը Ռոն դետին քովերը այ-  
ծերը արածելու ատեն, տեսաւ խո-  
շոր խնձորի մը ծառ՝ որ վրան լե-  
ցուն պտուղ էր. բայց չորութենէն  
սկսեր էր թռամիլ: Գիտեց նայե-  
ցաւ հողը, խնայեցաւ որ հող տարուե-  
լու ըլլայ նէ՛ ան ծառը կրնայ ող-  
ջըննալ: Վաղեց եկաւ տուն, առաւ  
բահը, դնաց ծառին արմատէն ին-  
չուան դետը ճամբայ մը բացաւ որ  
ջուրը հոն բերէ: Չորս օր չիզնաց՝  
աշխատանքը լմընցուց. Չուրը սկը-  
սաւ դալ, ծառին ճիւղերը շտկուե-  
ցան, ու օր օրուան վրայ պտուղ-  
ները հասան, դաշտն ալ քիչ մը  
ջրի երես տեսնալով սկսաւ կա-  
նաչնալ, որ կրցան այծերն ու ոչ-  
խարներն ալ քիչ մը խոտ գտնել:

Փեններ որ աս բանս ամենևին  
չէր գիտեր, շատ զարմացաւ, եր-  
բոր տեսաւ իր դաշտին զարգարուի-  
լը. տուն որ դարձաւ նէ՛ հարցուց  
իր տղոցը թէ ո՞վ ըրաւ աս բանս.  
Երբոր անոնք մենք չենք ըրած ը-  
սին, բանը Վիչենին մնաց, անի-



կայ ալ պարզմտութեամբ պատմեց .  
« Տեսայ որ ըսաւ՝ ծառը կը չորնայ ,  
խղճացի վրան , ջրի ճամբայ մը բա-  
ցի քովը որ պտուղները հասնին ,  
ու ասանկով օգնութիւն մը ըրած  
ըլլամ ձեզի որ այսչափ ծանրու-  
թիւն եղեր եմ ինչուան հիմա » :

Փեններ աս լսածին պէս ելաւ .  
գրկեց Վիչենը . « Ի՞նչ , ըսաւ իրեն .  
մեզի ծանրութիւն եղեր ես . չէ , չէ .  
քանի որ դուն աս տանս մէջ ոտքդ  
դրիր , Աստուծոյ օրհները մեր  
տանը վրայէն պակաս չէ . և դիտ-  
ցիր որ դուն քու աշխատանքնե-  
րովդ չափէն աւելի փոխարէնը ը-  
րիր մեր պզտի բարերարութեանը .  
թող որ հաւատքնիս ալ մեզի կը  
սորվեցընէ՝ թէ որբերը նայիլը , աղ-  
քատներուն ողորմիլը՝ մեր պարտքն  
է : Ուստի դուն չէ թէ միայն մեզի  
ծանրութիւն չես , հապա նաև մենք  
պարտաւան ենք քեզի ուրիշ շատ  
բարիքներ ալ ընելու » : Վիչեն աս  
խօսքերուս վրայ արցունքը սրբեց ,  
և ան օրէն վերջը աւելի ամենուն  
սիրելի եղաւ :



Վերջապէս աշունքը հասաւ ,  
բայց ինչ օգուտ . ան տարին դրե-  
թէ ամենեին բերք չիրերաւ , և ցո-  
րենը քիչ ըլլալուն՝ ամէնքը սկսան  
յուսահատիլ : Ան ատեն Վիչենը  
եղաւ չորս դին պտըտեցաւ որ մէկէն  
մէկալէն ողորմութիւն ուղէ Փեն-  
ներին տանը համար : Ամէն իրի-  
կուն որ տուն կը դառնար , հետը  
բան մը կը բերէր , ու խեղճերը կը  
մխիթարէր :

Օր մը անտառի մը մէջէն անցնե-  
լու ատենը հրացանի ձայներ լսեց .  
խմացաւ որ որսորդները նապաս-  
տակ կը բռնեն . քիչ մը ատեն կանկ  
առաւ կեցաւ . տեսաւ որ դիմացը  
նապաստակ մը գետինն ընկած կը  
տապալտըկի . վազեց վրան , բռնեց  
առաւ : Մարդ չիկար որ խմանար .  
ուստի ուղենար նէ՛ կրնար առնել  
տանիլ . « Բայց ասանկ բան ընել  
չըլլար , ըսաւ ինքն իրեն , աս նա-  
պաստակը իմս չէ , պէտք է որ առ-  
նեմ տանիմ՝ դարնողին տամ . լաւ  
է արքատ ըլլալ քան թէ դող » : Ա՛



մտքով առաւ նապաստակը զնաց  
որսորդներուն քովը :

Հասնելուն պէս տեսաւ աղնուա-  
կան պարոն մը կրակին քովը նըս-  
տած , ու չորս զին ծառաները հա-  
զուած դարդարուած՝ բոլորն ալ կե-  
րակուր պատրաստելու հետ են :  
Վիչենը խոնարհութեամբ մը զնաց  
բարև տուաւ պարոնին . ու դտած  
նապաստակը ցուցընելով , « Ահա ,  
ըսաւ , սասիկայ ճամբուն վրայ ըն-  
կած դտայ կիսամեռ . տեսայ որ  
չները ան կողմը չեն դար , ես առի  
հրամանոցդ բերի որ չըլլայ թէ կոր-  
սուի » :

Չարմացաւ պարոնը , ու ժպտե-  
լով մը ըսաւ իրեն . « Շատ սպրիտ ,  
որդեակ . դուն կ'երևնայ թէ աղէկ  
տղայ մըն ես . ինչ է քու անունդ .  
հօրդ անունը ինչ է :

— Իմ անունս Վիչեն է , բայց  
ճնողք չունիմ . ես Փեններին տու-  
նը կը կենամ , որ զիս իր քովը ա-  
ռաւ . թէպէտ ինքն ալ ութը դաւկի  
տէր է , ու շատ հարուստ մը չէ :



Ես հիմա քաղքէ քաղաք կը պտը-  
տիմ որ քիչ մը ապրուստ կամ կը  
տոր մը ստակ գտնեմ իրեն համար .  
վասն զի անիրաւութիւն ըրած կ'ըլ-  
լամ խեղճ մարդուն՝ թէ որ ես ալ  
իրեն ծանրութիւն ըլլամ :

— Ատ քու խօսքերովդ զիս դուժ-  
կը շարժես որդեակ . թէ որ դուր-  
ցածներդ իրաւ են նէ , դու ար-  
ժանի ես որ ուրիշները հոգ տանին  
վրադ . եկու նստէ կրակին քովը .  
քիչ մը խօսինք ինչուան կերակու-  
րին ատենը . ետքը քեզի քիչ մը  
բան կուտամ որ տանիս քու բա-  
րերարներուդ » : Նստաւ Աիշենը  
կրակին քով , պարտնն ալ ասդիէն  
անդիէն շատ բաներ հարցուց փոր-  
ձելու համար թէ ըսածները արդեօք  
իրաւ են թէ չէ . տեսաւ որ տղուն  
պարզսրտութեանն ու բարեմտու-  
թեանը խօսք չիկայ :

Ան միջոցին բոլոր անտառը սկը-  
սաւ խօսիլ փողերու ձայնէն , շնե-  
րուն հաջելէն . ու ետեւէ ետեւ չորս  
հինգ կարիճ երիտասարդներ հա-



սան ձիերով, բերին ցըցուցին պա-  
րանին իրենց բռնած որսերը. անի-  
կայ ալ Վիչենին բռնածը ցցուց,  
ու պատմեց թէ ինչպէս բռներ է:  
Շատ դարմացան անոնք ալ ու դո-  
վեցին անոր բարեսրտութիւնը: Աե-  
րակուրէն ետև լեցուցին կողովի մը  
մէջ հաց, կերակուր, երկու աման  
ալ զինի, ձեռքը տուին որ տուն  
տանի: Շատ շնորհակալ եղաւ բա-  
րերախտ տղան, առաւ բաները,  
սկսաւ երթալ: Հաղիւ թէ քիչ մը  
հեռացեր ու անտառը մտեր էր, ա-  
հաղին վայրի խող մը վաղելով ան-  
ցաւ դիմացէն: Տղան վախէն սկը-  
սաւ կանչուրուտել. որսորդները  
մէկէն վրայ հասան ու խողին ե-  
տևէն սկսան իյնալ: Աեցաւ Վիչե-  
նը որ տեսնէ թէ ծայրը ուր պիտի  
երթայ: Խողին չորս զին առին շնե-  
րը, ան ալ կատղած սկսաւ ետ դառ-  
նալ ու նորէն տղուն քովէն անց-  
նիլ: Որսորդները մէկ երկու հրա-  
ցան պարպեցին. բայց մեզք որ  
գնատակին մէկը եկաւ խեղճ տղուն



տաքը դարկաւ , տղան մարեցաւ զե-  
տինն ընկաւ , ու արիւնը ջուրի պէս  
սկսաւ վազել : Աղէկ որ որսորդնե-  
րուն մէկը տեսաւ , վազեց եկաւ  
օգնելու . բայց Ախչենն ինքզինքը  
կորսընցուցեր էր : Արսորդը զրկեց  
տղան բերաւ պարոնին ու հոն կրա-  
կին քովը դրաւ :

Շատ տրտմեցաւ պարոնը . մէ-  
կէն կանչել տուաւ որսորդները ,  
կապեցին տղուն վէրքը ու առին  
հետերնին՝ դարձան պարոնին տու-  
նը , որ բերդի մը մէջ էր : Շուտ մը  
վիրաբոյժ մը կանչեցին որ դնտակը  
հանեց մէջէն , ու առանց վտանդի  
վէրքը ըսընացուց :

Աս միջոցիս պարոնին միտքը դա-  
լով Ախչենին դուրցածները , շուտով  
ծառաներէն մէկը ձիով խրկեց Փեն-  
ներին տունն որ երթայ տեղեկա-  
նայ : Ծառան դնաց իմացաւ որ տը-  
ղուն պատմածները բոլոր իրաւ են .  
հետը առաւ Փեններն ալ , առաջուց  
հասկցընելով իրեն Ախչենին գլխուն  
եկածը , ու դարձաւ տուն : Մեծ



ցաւ եղաւ Փեններին ու իր ընտա-  
նեացը երբոր լսեցին աս բաներս ,  
կսկիծներնէն սկսան լալ : Բերդը  
հասանելուն պէս մէկէն Վիչենին  
դացին . Փենները մէկէն ճանչցաւ .  
տղան ալ ձեռքն երկնցուց ու ը-  
սաւ իրեն . « Ի՞նչպէս դժբաղդ եմ  
եղեր . դիտուս անանկ բան մը ե-  
կաւ , որ երկայն ատեն անկողնէս  
չիկարենամ պիտի ելլել որ քիչ մը  
օդնութիւն ընէի ձեզի » : Աս խօս-  
քէս բոլոր կեցողներուն սիրտը ե-  
լաւ : Պարօնը իր ծառայէն ամէն  
բան խմացած ըլլալով , հրամայ որ  
Փեններին ընտանեացը կարօտու-  
թիւնը հոգացուի . անոր երկու ար-  
դոց հոգն ալ իր վրայ առաւ , ու  
խրկեց Բենեդիկտեանց վանքը որ  
կրթուին : Անկէ ետքը ամէն շաբաթ  
կառք մը լեցուցած ամէն բարիքով  
կը խրկէր Փեններին տունը :

Իրեք շաբաթէն վերջը տղան ը-  
սընտցաւ , և ուղեց դառնալ Փեն-  
ներին քովը . բայց պարօնը իր հի-  
ւանդութեան ատենն ըրած համբե-



բութիւնը և բարի սիրտը տեսնելով  
թող չխտուաւ . և տնեցիք ամէնքը  
կ'ուզէին որ հոն մնայ :

Պարոնը վարպետ մը բռնեց Վի-  
չենին . անիկայ ալ շատ խելացի ըլ-  
լալուն՝ անանկ առաջ դնաց որ ամ-  
մէնքը դարմացան վրան : Քիչ ա-  
տենուան մէջ թուարանութիւն ,  
պատմութիւն , երկրաչափութիւն ,  
քերականութիւն ու երկրագործու-  
թիւն սորվեցաւ : Բայց դիտութիւն-  
ները ամենեին արդելք մը չեղան  
դինքը բարեպաշտութենէն ետ ձգե-  
լու , մանաւանդ թէ աւելցուցին : Ա-  
դէկ հասկըցեր էր որ դիտութիւնը  
առանց առաքինութեան շատ ան-  
դամ անօդուտ է , ու վտանգաւոր  
ծանրութիւն մըն է . և թէ ալ ադէկ  
է քանի մը բան չիդիտնալ ու բա-  
րեպաշտութեան մէջ մնալ , քան  
թէ ամէն բան սորվիլ ուղեւով հո-  
գին առաքինութենէ պաղեցընել :

Երեք տարուան մէջ Վիչենն ուս-  
մունքը լմբնցուց : Ան ատեն պա-  
րոնն անոր յարմարութեանը վրայ



վատահանալով, ունեցած երկիրնե-  
րուն մէկ մեծ կտորը անոր ձեռքը  
տուաւ որ երթայ հոն իր ուղածին  
պէս դիտցածին պէս բանեցընել  
տայ :

Վիչեն որ ամենեին մտքէն չէր  
հաներ Փեններին ընտանիքը, իր  
քովը կանչեց դանոնք, ու սկսաւ  
երկիրները բանեցընել : Նոր նոր  
հնարքներ դտաւ՝ երկրագործու-  
թեան աշխատանքը դիւրացընելու,  
երկիրը պարարտացընելու . և ինչ  
փորձ որ ըրաւ նէ՛ ամէնքն ալ յա-  
ջողեցան : Եւ ան տեղն որ ինչուան  
ան օրը մէկ անսխտան հող մը կը  
կարծուէր, սկսաւ ամենէն աղէկ  
բերք բերել : Քիչ ատենուան մէջ  
ան երկիրը կտոր մը տեղ չիմնաց  
որ օգտակար բաներ չիրուացընէ .  
մէկ խօսքով, անապատ դարձած  
հողը դուարձալի պարտէղ մը դար-  
ձաւ :

Վիչեն տեսնելով թէ իր աշխա-  
տանքը պարապ չերթալէն վերջը,  
իրեն վատտակ ալ կը բերէ, սկսաւ



ուրախանալ: Փեններին ընտանեա-  
ցը հետ վաստրկածները կը վայե-  
լէր. և աւելի անոր կ'ուրախանար,  
որ իր բարերարին փոխարէն մը  
կրցաւ ընել: Փեններին տնակը ու  
երկիրն ալ հաւատարիմ երկրագոր-  
ծի մը ձեռքը տուին որ սղտի եկա-  
մուտ մը եղաւ իրեն:

Պարոնը տեսնելով Վիչենին ը-  
րածները, գովեց զինքը, քաջալե-  
րեց. և ուրիշ երկիրներ ալ տուաւ:  
Խելացի տղան խոհեմութեամբ ա-  
մէն բան կարողի դրաւ, ու պարոնին  
եկամուտը խիստ շատցուց: Պարոնն  
ալ ուզելով Վիչենին ու Փեններին  
փոխարէն մը ընել իրենց աշխա-  
տանացը համար, կիրակի օր մը  
փառաւոր կերակուր մը տուաւ ա-  
նոնց լեռան մը վրայ: Ղուխը ինքը  
նստաւ, աջ դին Փենները առաւ,  
ձախ դին Վիչենը, ետեւն մէկալ  
տղաքը կարդով: Սեղանին ատենը  
Վիչենն ոտք ելաւ. ձեռքը գաւաթ  
մը դինի առած՝ շատ շնորհակա-  
լութիւն ու աղէկ աղէկ բարեմաղ-



Թուօթիւններ ըրաւ պարոնին կենա-  
ցը համար . պարոնն ալ ուրախու-  
թենէն սկսաւ լալ , ու քիչ մը լուռ  
կենալէն ետքը՝ ձեռքը ծոցը խոթեց ,  
խել մը թղթեր հանեց Աիչենին  
տուաւ որ բարձր ձայնով կարդայ :  
Աիչենը սկսաւ կարդալ . մէջի գը-  
րածն աս էր , թէ « Ես մկաներով  
բոլոր ունեցած երկիրներս Աիչե-  
նին ու Փեններին կու տամ , և ի-  
րենցմէ միայն տասանորդի պէս  
քիչ մը բան կ'ուզեմ տարին » : Ո՛վ  
կրնայ պատմել անոնց ուրախու-  
թիւնը՝ պարոնին աս ըրած առա-  
տաձեռնութեանը վրայ : Ամէնքը  
մէկէն ոտքը ինկան , սկսան շնոր-  
հակալ ըլլալ ու ձեռքը պագնել : Պա-  
րոնը կ'ուզէր արգիլել անոնց շնոր-  
հակալութիւնը , բայց անկարելի ե-  
ղաւ . և իր աս գործքովը սուրբ գըր-  
քին խօսքը իրաւ հանեց ու հասկը-  
ցաւ , թէ « Ալ լաւ է տալը՝ քան թէ  
առնուլը » :

Ան օրը բոլոր ուրախութեամբ  
անցուցին : Մէկը ուրիշներուն բա-



րիք ընելով կը դուարճանար, մէկ  
կայնոնք ալ իրենց երախտադիտու  
թիւնը ցուցընելով:

Անկէ վերջը Փեններին տունը  
հանդիստ ու երջանիկ ապրեցաւ:

Երբոր ալ Փեններ ծերացաւ ու  
չէր կրնար աշխատիլ, Վիչենը ը-  
սաւ որ հանդիստ իր տեղը նստի-  
ւ ինքը իր որդիական դուժը ու սէ-  
րը կը ցուցընէր վրան:

Փենները միշտ առ խօսքս կ'ը-  
սէր Վիչենին. « Մենք քեզի շատ  
պէտք է շնորհակալ ըլլանք. դուն  
չըլլայիր նէ՛ մենք աղքատութեան  
մէջ կը խղղուէինք »: Ինքն ալ պա-  
տասխան կու տար. « Չէ, անանկ  
չէ. ասոնք բոլոր ձեր ողորմածու-  
թեանը պտուղն է, անով է որ Աս-  
տուած օրհնեց դձեղ և վարձատրեց.  
որովհետև ինձի պէս խեղճ տղու  
մը չէ թէ միայն մեծ դուժ ցըցու-  
ցիք, հապա նաև ձեր բերնին հացը  
կարելով ինձի կերցուցիք. ասանկ  
բարեգործութիւնը ոչ երբէք կը  
կորսասի »:



Փեններ բոլոր կենացը մէջ շի-  
մուցաւ թէ ինքն ալ առնուի աղ-  
քատ էր . ուստի աղքատներուն օղ-  
նելու մեծ փոյթ ունէր : Աղքատ շէր  
եղած որ իրեն դար ու պարասլ ձեռ-  
քով դառնար : Իր ծերութեան ա-  
տենը սրտին մեծ ուրախութիւնը  
աս էր որ կը տեսնար , թէ իր տը-  
ղաքն ալ իր բռնած ճամբան կը  
բռնեն . և մեծ բանը ո՛րն է (որ դը-  
ժուար կը դանուի մեծ տներու մէջ ,)  
իր տղոցը սէրն ու միաբանութիւնը  
աչքով տեսաւ և ուրախ սրտով օրհ-  
նելով զիրենք , ու փառք տալով Աս-  
տուծոյ նախախնամութեանը՝ հողին  
աւանդեց :

Ասով քահանան խօսքը վերջա-  
ցուց : Պարոն Մարկեղոսին ալ սիր-  
տը ելած՝ դարձաւ ապսպլըրեց իր  
տղոցը որ շիմուռնան աս սիրուն  
պատմութիւնը : Ան ատենը քահա-  
նան դարձաւ ըսաւ . « Ես ալ կ'ը-  
սեմ ձեզի ան խօսքն որ Քրիստոս  
ըսաւ Փարիսեցւոց՝ Սամարացիին  
պատմութիւնը պատմելէն վերջը .



« Գացէ՛ք դուք ալ անոր պէս ըրէ՛ք » :  
« Հապա՛ , ինչո՞ւ չէ՛ , ըսին տղաքը ,  
մենք ալ ձեռքերնէս եկածին չափ  
դժած պիտի ըլլանք ու բարեգոր-  
ծութիւն պիտի ընենք » . և ուրախ  
դուարթ դարձան տներնին :



## ՉՈՐՐՈՐԴ ԻՐԻԿՈՒՆ

Բարեգործուքիւն .

Պեղծիայի քաղաքներուն մէկուն  
մէջ Ուլրիք անունով հարուստ եր-  
կրթի վաճառական մը կար . ասի-  
կայ երկու աղջիկ դաւակունէր . մէ-  
կուն անունը կատարինէ , մէկալի-  
նը Որսուլա : Իր բարեպաշտ , առա-  
քինի ու խելացի ընկերը ատենէ  
դուրս վախճանած ըլլալով , բարե-  
պաշտ Ուլրիքը բոլոր իր սէրը և  
ջանքը դարձուց իր դակերները աղէկ  
կրթելու . ուստի ետէ եղաւ , դտաւ  
իրենց համար մէկ աղէկ խելացի  
վարժապետ մը , որ զիրենք կրթէ .  
դակերներն ալ ջանացին ուրախա-  
ցընել իրենց հայրը՝ հնադանդ ըլլա-  
լով իրենց վարժապետին :



Քանի որ տարիքնին կ'առնէին՝  
կամաց կամաց սկսան փայլիլ ի-  
րենց առաքինութիւնները, որոնց  
զլխաւորն էր զութ, և ուրիշին բա-  
րիք ընել:

Գեռ պղտիկ ալ ըլլալով շատ ան-  
դամ չէ թէ միայն իրենց նախաճա-  
շիկէն ու սեղանէն բաժին կը հա-  
նէին աղքատներուն, հապա էն սի-  
րած բաներնին ալ իրենց բերնէն  
կը կտրէին, ուրիշ աղքատներու  
կու տային:

Ստոնք քաղքէն քիչ մը հեռու  
զեղեցիկ տուն մը ունէին. ուստի  
իրենց վարպետին հետ մէկտեղ շատ  
անդամ հոն կ'երթային օդ փոխե-  
լու: Սա պղտիկ ճամբորդութիւնը  
իրենց առիթ կ'ըլլար՝ մէկուն մէկա-  
լին շատ ողորմութիւններ ընելու.  
կը նայէին որ միշտ հետերնին բան  
առնեն զեղացւոց տանին. զեղա-  
ցիներն ալ մեծ ուրախութիւն կու-  
նենային երբոր իրենք հոն կ'եր-  
թային: Երբեմն լաթ կը բաժնէին  
անոնց, երբեմն իրենց հիւսած դուր-



պաները : Հայրերնին ալ սա բաներս լսելով՝ աւելի կ'ուրախանար, ու երբեմն երբեմն մէյմէկ քիչ ըստակ ալ կուտար որ ուղածնուն պէս ողորմութիւն ընեն :

Սնդամ մը Ուլրիք իր ճամբորդութենէն դարձած ըլլալով, շատ նեղացաւ իր պարտիզպանին . ասիկայ եօթը զաւկի տէր էր . բայց ինքզինքը խմելու տուած, թէ պարտէզը և թէ իր տունը տեղը երեսի վըրայ թողուցած, կ'երթար մէկ քանի իրեն պէս զինեմոլ մարդիկներու հետ մէյտեղ ունեցածը չունեցածը կը մտխէր : Ուլրիք սպանացաւ ասոր, թէ որ ճամբադ չիփոխես՝ քեզ կը հանեմ քովէս, ըսաւ . բայց անիկայ մէկ քանի օրէն ետքը նորէն սկսաւ իր առջի ջուրը բռնել . այնչափ որ հանեց զինքը իր քովէն :

Կատարինէն և Արսուլան շատ կակճացին սա բանիս վրայ . բայց ինչ շահ՝ իրենց ձեռքէն բան չէր դար : Աւտի հող տարին որ ձեռ-



քերնէն եկած բարիքը ընեն պարտախախտութեանն զաւերներուն :

Պարտախախտները ստակ չի գտնելով խանդէն դադրեցաւ . բայց վաստակ մը չունենալուն համար դնաց մէկ պղտի տնակ մը դրաւ , ուր խեղճ տղաքը չոր խոտի վրայ կը պառկէին : Աս նեղութիւններէս պարտախախտութեանն կինն ալ հիւանդացաւ . և կատարինէն ու Արսողան անդադար մէյմէկ քիչ բան կը խրկէին իրենց . բայց ողորմելի կնկանը հիւանդութիւնը երթալով ծանրացաւ . տղաքն ալ երեսի վրայ մնացած կուլային կ'ողբային :

Պարոն Աւրիքը որ ամիսներով առաջ Փարիզ գացեր էր , սա միջոցիս դարձաւ եկաւ տուն , և իր զաւերներուն մէյմէկ ընծայ բերաւ . մէկուն փառաւոր մարդըրտէ վրդնոց մը , մէկալին ալ աղնիւ բարակ Լահոտի շալ : Հայրերնին միտքը դրեր էր որ սա ընծաներով իր զաւերներուն ուրախութիւնը տասնպատիկ աւելցընէ . ասոր ներհակ



անոնք մէկ մեծ ուրախութիւն մը չի  
ցըցուցին : Շատ դարմանցաւ հայ-  
րերնին առ բանիս վրայ , և ուղեց  
պատճառը խմանալ : Աղջիկները  
քանի որ ուղեցին ծածկել , հայրեր-  
նին սկսաւ ալ աւելի ետևէ իյնալ :  
Ան ատենը կատարինէն ըսաւ .  
« Ես , սիրելի հայր իմ , աւելի կը  
փափաքէի որ վզնոցիս համար տը-  
ւած ստակդ ինձի տայիր . ինչու որ  
իմ քովս ասանկ դարդեր լեցուն է :

— Նոյնպէս ալ ես , ըսաւ Արստ-  
լան , սիրով կու տամ հրամանքիդ  
շալս , թէ որ ինձի անոր գինը տա-  
լու ըլլաս » :

Ո՛վ կրնայ պատմել ասոնց հօրը  
դարմանքը ապշութիւնը՝ իր դակը-  
ներուն ասանկ խնդիրքին վրայ :  
Քիչ մը ատեն մտածելէն ետքը դար-  
ձաւ ըսաւ իրենց . « Շատ կը դար-  
մանամ ձեր առ բաներուս չիհա-  
նելուն , որ ես ամէն կերպով ջանա-  
ցի ձեզի էն աղէկ բաները բերել .  
չէի կարծեր թէ դուք ստակը դար-  
դէն աւելի կը սիրէք : Բայց անտա-



բակոյս ասոր տակը բան մը կայ .  
մի պահէք ինծմէ . հասկընամ ինչ  
բան է , որ ճարը գտնանք » :

Ան ատենը վաղեց Կատարինէն  
հօրը ձեռքը պաղաւ ու ըսաւ . « Զար-  
գարանքի տեղ ստակ ուղեղնուս  
պատճառը աս է , որ ուզած բաներ  
նուս կարենանք բանեցընել » :

« Էյ ինչ բանի պիտի բանեցը-  
նէք նէ ըսէք նայիմ . ինչ է ուզած  
նիդ :

— Մենք մտքերնիս դրեր էինք  
որ ան ստակը մեր պարտիզպանին  
տանք , որուն կինը հիւանդ է ու  
տղարը անօթութենէ մահուան դու-  
ռը հասեր են : Սակէ 'ի դատ իրենց  
տանը վարձքը վճարելու օրերն ալ  
հասեր են , ու թէ որ տալու չըլլան  
պէտք է որ տնէն ելլեն » :

Պարոն Աւրիքը դարմանքէն չի-  
դիմացաւ , դրկեց դուկըները պա-  
ղաւ . հանեց քսակը , պարպեց առ-  
ջենին . և սրտին ուրախութենէն  
լալով « Երնեկ ինծի որ ստանկ բա-  
րեաիրտ ու բարերար դուկըներու



տէր եղեր եմ, ըսաւ: Ահա հիմա  
կու հիմա վրաս ունեցածս աս է .  
աս ստակները տարէք իրենց. խօսք  
կու տամ ես ասկէց ետքը զիրենք  
հոգալու . բայց աս դաշինքով որ  
պարտիզականը իր մտութիւններէն  
ետ կենայ » : Անոնք մէկէն ստակը  
առնելնուն պէս վազեցին զացին  
պարտիզականին տունը . « Ուրախ  
կեցիր, ուրախ կեցիր, կանչեցին  
հիւանդ կնոջը, ահա մեր հայրը ձեր  
վրայ զթալով խրկեց ձեզի հիմա .  
կու հիմա ասչափ ստակ, և խոս  
տացաւ որ ասկէց ետքը ձեզ ինքը  
պիտի հոգայ . բայց աս դաշինքով  
որ էրիկդ զինի խմելէն ետ կենայ » :

Ա. Ա ձեզի կը թողում մտածել թէ  
ինչ ուրախութիւն ունեցաւ խեղճ  
կինը՝ երբոր անկողնին վրայ ութը  
ոսկին մէկէն տեսաւ : Շնորհակա  
լութիւններ ընելուն չիմնաց, անոնք  
ելան վազեցին դարձան տուն . և  
հայրերնին դեռ սանդուխէն նոր  
վար ինջեր էր, երբոր տեսաւ որ  
ուրախութեամբ իր աղաքը կու դան .



գարմացաւ թէ ինչ շուտ դարձան :  
« Մտածմունքս պարտիզականին վը-  
րայ է ըստ, մէկ աղէկ տեղ մը կ'ու-  
ղեմ գտնել իրեն . բայց կը վախ-  
նամ որ մէկէն 'ի մէկ իր հանդիստը  
գտնալու ըլլայ նէ , նորէն իր ախ-  
տը ձեռք կ'առնէ : Ինծի կ'երևնայ  
թէ իր բարեկամներէն հեռացընե-  
լու է զինքը ու թող չխտալու է որ  
պարապ կենայ . ասանկով կրնանք  
զինքը կրթել : Յս կը խաւրեմ զին-  
քը մեր անտառը , որ հոն երթայ  
աշխատի , ուր որ ոչ զիննտուն կայ  
և ոչ բարեկամ : Չեղի ինչպէս կ'ե-  
րևնայ :

— Շատ աղէկ մտածեր ես , ը-  
սին . ասկէ աղէկ ճար չէինք կրնար  
գտնել » :

Նոյն օրը նորէն գացին հիւան-  
դին ու պատմեցին իրենց հօրը ընե-  
վիքը : Խեղճ կէնք որ ամենևին չէր  
յուսար ասանկ երջանկութեան  
հասնելու , ձեռուրներն երկինքը  
վերցուց , շնորհակալ եղաւ Սատու-  
ծոյ որ իր նախախնամութիւնը ի-  
րենց վրայէն պակաս չըրտա :



Կատարինէն ու Ռրսողան խել մը  
ատեն հոն կեցան, սենեակը մաք-  
րեցին, տղոցը վրանին զլուխնին  
չտկեցին. կտոր մը կերակուր եփե-  
ցին իրենց, մխիթարեցին զիրենք,  
ու դարձան տուն:

Կնոջը հողերն ալ քիչ մը սլակ-  
սելուն՝ սկսաւ աղէկնալ, ու օր օ-  
րուան վրայ անանկ առողջացաւ,  
որ սկսաւ իր էրկանը հետ աշխա-  
տիլ, ասրուատ դանել:

Իսկ պարոն Աւրիքը ըսածն ը-  
րաւ. դրաւ զինքը մէկ պղտի երկրի  
մը վրայ. բայց տալէն առաջ ըսաւ  
իրեն բոլոր ընտանեացը առջևը.  
« Գիտես բարեկամ, թէ ինչ խեղճ  
վիճակի մէջ ընկար դուն քու աս  
ախտովդ. ինչուան աս օրս դրեթէ  
քու վաստակդ կորսնցուցիր փուճ  
դուարճութեան մը համար, որ խե-  
լացի մարդու դործք չէ: Ինքզինքդ  
խմելու տալով արեցիր քու առող-  
ջութիւնդ, ու քու ընտանիքդ անօ-  
թութենէ մեռնելու վտանդի մէջ  
ձգեցիր: Ամէնուն առջևը անունդ  
կտարեցիր, ամէնուն աչքէն ելար.



քու տղոցդ ու զեղացոց տուած  
դայթակողութիւններովդ զԱստուած  
բարկացուցիր : Քեզ տեսնամ ու  
րեմն ասկէ ետքը ինչպէս պիտի փո-  
խես վարքդ , որ ամէնքը տեսնելով  
չինուին քու վրադ : Մի վախնար ,  
մեղաց առիթներէն հեռանալով և  
աղէկութեան ետեւ ըլլալովդ , ան  
խենթ բաներուն տեղը՝ ուրիշ միա-  
թարութիւններ ու դուարձութիւն-  
ներ կ'ունենաս : Պիտի դտնես զԱս-  
տուած ու իր շնորհքը , որ քեզի  
կ'օգնեն , ուժ կու տան խօսք տուած  
բաներդ կատարելու . իսկ թէ որ  
քու ախտերուդ ծառայ մնայիր՝ զԱս-  
տուած քեզի օգնական չէիր կրնար  
ունենալ : Չանա՛ , աշխատէ՛ , ասկէ  
ետեւ նոր մարդ եղիր . ան ատենը  
կը յուսամ որ ճշմարիտ երջանկու-  
թիւնը կը դտնես և մահը զքեզ չի-  
կրնար վախօցընել : Ճշմարիտ քրիս-  
տոնեան ամենևին չիվախնար Աս-  
տուծոյ զիմացը ելլելու . մեղաւորն  
է որ կը վախնայ , վասն զի իր ը-  
րաձներուն վրայ համար պիտի  
տայ » :



Աս խօսքերէս պարտիզպանին  
ակրտը ելաւ , ու խոստացաւ որ ան-  
կէ վերջը ինքզինքը շտկէ : Իրաւը-  
նէ խօսքն ալ պահեց , ու փոխուե-  
ցաւ նոր մարդ եղաւ : Բարեպաշ-  
տութիւնն որ դրեթէ մոռցեր էր ,  
իրեն մէկ հատիկ մխիթարութիւնն  
եղաւ . և իր ակտերը կտորելով ա-  
նանկ առաքինի եղաւ որ ամէնքը  
իրմէ բարի օրինակ կ'առնէին :

Իր տղաքն ալ մեծցան , կատա-  
րեալ քրիստոնէի վարք ունեցան :  
Կատարինէն ու Արսուլան շատ ան-  
գամ կ'երթային անոնց . որ օր օ-  
րուան վրայ աղէկնալով իրենց մեծ  
տրախութեան պատճառ եղան :

Պարտիզպանն ալ միշտ կ'ըսէր  
իրենց . « Չեմ դիտեր ինչպէս շնոր-  
հակալ ըլլամ ձեզի որ ինձի ասանկ  
մեծ աղէկութեան պատճառ եղաք » :

Ահա ասանկ օրհնեց Սատուած  
ան անմեղ ու դժած աղջիկները , որ  
իրենց ըրած մէկ բարեգործութիւնը  
պատճառ եղաւ մէկ ամբողջ տան  
մը երջանկութեան :



## ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

ԱՌՋԻ ԻՐԻՎՈՒՆ , Աստուծոյ վախը , և մարդկային նկատմունքը . . . . .	7
ԵՐԿՐՈՐԴ ԻՐԻՎՈՒՆ , Հնազանդութի . . . . .	37
ԵՐՐՈՐԴ ԻՐԻՎՈՒՆ , Երախտագէտ սը- ղայ . . . . .	56
ՉՈՐՐՈՐԴ ԻՐԻՎՈՒՆ , Բարեգործու- թիւն . . . . .	76

---




















P. U. 6071